ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2024

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

www.tvradio.am

Տիգրան Հակոբյան,
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ

Հարգարժան խորհրդարան,

Տեսալսողական մեդիան տեղեկատվության տարածման ամենաազդեցիկ միջոցներից է և ունի ամենալայն լսարանը: Իր բազմազանությամբ, բազմակարծությամբ, մատչելիությամբ այն պետության տեղեկատվական, մշակութային, լեզվական անվտանգության նշանակալի գործոն է, որն ապահովում է պետության գործունեության տեղեկատվական և քարոզչական ուղեկցությունը:

Տեսալսողական ծառայություններ մատուցող ընկերությունների բնականոն զարգացումը, ֆինանսական կայունությունն ու քաղաքական հասունությունը, որակյալ և հանրօգուտ բովանդակությունը, տեղեկատվական անվտանգությունը, մոլորեցնող լրատվական օրակարգերի գրոհները, հանրային արձագանքման մշակույթն ու բազմաթիվ այլ բաղադրիչներ կազմում են այն մեծ մեդիա էկոհամակարգի մասը, որն այս կամ այն չափով կարգավորում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

Տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, իրավական կարգավորումների անկատարությունը, քաղաքական համընդհանուր վերաձևավորումների գործընթացները պետությունից և հանրությունից պահանջում են նույնքան արագ և միաժամանակ խոհեմ արձագանքներ՝ այդ էկոհամակարգն արդյունավետ, անաչառ և թափանցիկ կարգավորելու համար: Այսպես կոչված «հետճշմարտության», «ֆեյքային նորությունների» այսօրվա միջավայրում, երբ զանգվածային հաղորդակցության միջոցները (հատկապես համացանցային) շատ հաճախ վերածվում են քարոզչության և ապատեղեկատվության, ատելության և խտրականության տարածման, քաղաքական լարվածության գործիքի, տեսալսողական մեդիայի ամբողջական կարգավորումը շատ ավելի մեծ նշանակություն է ստանում:

Հետևաբար, Հանձնաժողովն առաջնային խնդիր է համարում տեղեկատվական անվտանգությանը սպառնացող, լրագրության մասնագիտական չափորոշիչներն արժեզրկող, հեռարձակողների անկախությունն ու ազատությունը, հանրային շահի սպասարկումն անտեսող գործոնների չեզոքացումը: Այդ նպատակին հասնելու համար Հանձնաժողովը պարտավոր է գործել ավելի արդիականացված հայեցակարգով, սակայն ներկա օրենսդրական գործիքներն ու լիազորությունները խիստ սահմանափակ են ու թույլ չեն տալիս իրացնելու կարգավորող մարմնի ողջ ներուժը: Ստիպված ենք նաև արձանագրել, որ թե՛ հայեցակարգային, թե՛ օրենսդրական փոփոխությունների պահանջը չեն դառնում հանրային լուրջ քննարկման առարկա:

Հանձնաժողովն իր տարեկան հաղորդման ներկայացումն Ազգային ժողովում դիտարկում է ո՛չ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ հոդվածի պահանջի կատարում, այլ նաև կարգավորող մարմնի գործունեության հանրային հաշվետվություն: Ուստի, տրամադրելով կարգավորող մարմնի իրականացրած գործառույթների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ և վիճակագրական տվյալներ, մենք նաև ներկայացնում ենք այն հրատապ խնդիրները, որոնց լուծումը կնպաստի տեսալսողական ծառայությունների մատուցման և սպառման արդիական համակարգի ձևավորմանը:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

2 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԿԱԽ, ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 8

4 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 11

5 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14

5.1 Հեղինակազորման գործընթաց 15

5.2 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ
- Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ
- Մայրաքաղաքային սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ
- Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

5.3 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ 19
- Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ
- Երևան քաղաքում սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ
- Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

5.4 Առանց լիցենզիայի տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ 21
- Հանրային հեռարձակողներ
- Օտարերկրյա տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ

5.5 Մալուխային կամ այլ ցանց օգտագործող ցանցային օպերատորներ 23

5.6 Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորներ 26

5.7 Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվությունների տրամադրման գործընթաց 27

6 ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 28

6.1 2024 թվականի լիցենզավորման, 29
լիցենզիայի գործողության դադարեցման
ցուցանիշներ

7 ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ 30
ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

7.1 Ընդհանուր տեղեկություններ 30
մշտադիտարկման մասին

7.2 Էթիկայի նորմերի պահպանման 35
մշտադիտարկում

7.3 Ատելության խոսքի դեմ 36
պայքարի անհրաժեշտություն

8 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ 38
ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

9 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 42

10 ԴԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ 47

11 ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ՀՀ 51
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ
ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ

12 ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ 51

13 ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 58

14 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ 59
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

15 ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 60

16 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 61
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

17 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 62

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39-րդ հոդվածների համաձայն կարգավորող մարմինը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Ազգային ժողով է ներկայացնում 2024 թվականի իր գործունեության և տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդումը:

Տարեկան հաղորդման մեջ ներառված են Հանձնաժողովի և նրա կարգավորման ներքո գործող տեսալսողական մեդիայի գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, մշտադիտարկման արդյունքներ, հեղինակազորման, լիցենզավորման, վարչական վարույթների, դատական գործընթացների մասին տվյալներ, ուսումնասիրություններ, եզրակացություններ:

Հանձնաժողովն անդրադարձել է նաև վերջին տարիներին մեդիաոլորտը կարգավորող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու հետևանքներին, որոնք հաճախ բացասական են անդրադառնում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների բնականոն գործունեությանը, զարգացմանն ու անկախությանը:

Տարեկան հաղորդման մեջ ներկայացված են նաև այն խնդիրները, որոնք լուծում չստանալով՝ վտանգում են Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը, անհավասար մրցակցային պայմաններ են ստեղծում տարբեր հարթակներում գործող տեսալսողական մեդիայի համար, նվազեցնում կարգավորող մարմնի գործունեության արդյունավետությունն ու հանրային նշանակությունը:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին» օրենքներով, տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

2 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հեռարձակողների ազատությունն ու անկախությունն ապահովելը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ հոդվածի և Օրենքի պահանջն է, և Հանձնաժողովն իր վերջին տարեկան հաղորդումներում ավանդապես անդրադառնում է Հեռարձակողների ազատության և անկախության վիճակին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ 2024 թվականին իր կարգավորման ներքո գործող տեսալսողական մեդիածառայություններ մատուցողները գործել են ազատ, խմբագրական և կադրային քաղաքականությունը եղել է ինքնուրույն և անկախ, զերծ իշխանության տարբեր թևերի միջամտությունից:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարվա հունվարին ևս կարգավորող մարմինը գրավոր դիմել էր լիցենզավորված և հեղինակագրված տեսալսողական մեդիածառայություն մատուցող բոլոր ընկերություններին և ցանցային օպերատորներին: Հարցադրումը հետևյալն էր. արդյոք 2024 թվականի ընթացքում եղե՞լ են դեպքեր, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական պաշտոնյաները, կուսակցությունները, քաղաքական, հասարակական կամ տնտեսական կազմակերպությունները, ինչպես նաև այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք խոչընդոտել են իրենց բնականոն աշխատանքը, միջամտել խմբագրական կամ կադրային քաղաքականությանը:

Հարցադրումներ են ուղարկվել նաև տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների կամ հեռարձակողների հետ պայմանագրերի կնքման իրավունքը սահմանափակելու կամ միջամտելու, ինչպես նաև որևէ տեսալսողական ծրագիր վերահաղորդելու միջամտության դեպքերի վերաբերյալ: Հարցմանն ի պատասխան՝ Հանձնաժողովը ոչ մի բողոք չի ստացել:

Հանձնաժողովը չի ստացել որևէ դիմում-բողոք հեռարձակողների ազատությունն ու անկախությունը ոտնահարող կամ սահմանափակող դեպքերի վերաբերյալ նաև 2024 թվականի ընթացքում: Այսպիսով, Հանձնաժողովը փաստում է, որ իր կարգավորման դաշտում մեդիածառայություններ մատուցողները գործել են ազատ և անկախ:

Հարկ ենք համարում ևս մեկ անգամ հիշեցնել, որ Հանձնաժողովի լիազորությունները չեն տարածվում ողջ մեդիա տիրույթի վրա, հետևաբար՝ մեզ կարող են հայտնի չլինել այնպիսի դիպվածներ, որոնք կարող են մտահոգվելու առիթ հանդիսանալ:

«Լրագրողներ առանց սահմանների» միջազգային իրավապաշտպան կազմակերպության Մամուլի ազատության ցուցանիշի համաձայն՝ 2024 թվականին Հայաստանը 180 պետությունների շարքում զբաղեցրել է 43-րդ հորիզոնականը, բարելավել իր դիրքը 6 կետով՝ գրավելով բացարձակ առաջատար դիրք տարածաշրջանում:

Հանձնաժողովը, սակայն, շարունակում է ուշադրություն հրավիրել Հայաստանի մեդիա տիրույթի խիստ բևեռացման և ապատեղեկատվության ու ատելության խոսքի աճի վրա:

2024 թվականին Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում պաշտպանել է Հեռարձակողների՝ ինքնուրույն և պատասխանատու խմբագրական քաղաքականություն վարելու իրավունքը, հանդես եկել այդ իրավունքը պաշտպանող հայտարարություններով, առաջարկել խնդիրների լուծումներ, համագործակցել տեսալսողական մեդիայի խնդիրներով զբաղվող պետական գերատեսչությունների և ոչ պետական կազմակերպությունների հետ:

Կարգավորող մարմինը կարևորում է ընդգծել, որ թեև մեր հասարակությունը շարունակում է ապրել քաղաքական բևեռացման, ապատեղեկատվության և ատելության խոսքի՝ միտումնավոր կամ ինքնաբուխ արշավների պայմաններում, որոնք հաճախ սնուցվում են առցանց հարթակների և սոցիալական մեդիայի անվերահսկելի կարգավիճակից, այնուամենայնիվ, հանրային մուլտիպլեքսում և ցանցային օպերատորների տեսալսողական ծրագրերում զգալիորեն նվազել են ատելության և անհանդուրժողականության խոսքը, թշնամանքի հրահրումը, բռնության կոչերն ու սպառնալիքները:

Դրան նպաստում են Հանձնաժողովի մշտադիտարկումներն ու կարգավորման գործիքները, որոնք թեև ունեն սահմանափակ կիրառում, բայց կարողանում են հավասարակշռել Հեռարձակողների իրավունքներն ու պարտականությունները:

Խոսքի ազատության երաշխավորումը և խմբագրական պատասխանատու քաղաքականությունը մեծամասամբ կախված են Հեռարձակողների ֆինանսական ինքնաբավությունից, օրենսդրական բացերի լրացումից և գերատեսչությունների՝ պատշաճ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունից:

Պետությունը պետք է ապահովի լրատվամիջոցների անկախ գործելու բոլոր հնարավորությունները՝ այդ թվում նաև համագործակցելով նրանց հետ և կիրառելով ավելի ճկուն օրենսդրական կարգավորումներ:

Նախորդ տարիներին Հանձնաժողովը նշել էր մի քանի գործոն, որոնք շարունակում են լրջորեն խոչընդոտել Հեռարձակողների կայուն զարգացմանը: Դրանք են՝ գովազդային մուտքերի նվազումը, վերգետնյա և առցանց հեռարձակողների ոչ հավասար մրցակցային դիրքը՝ օրենքների կիրառման տեսակետից, հանրային մուլտիպլեքսում և մալուխային ցանցերով հեռարձակողների միջև առկա կարգավորումների խզվածքը:

Լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններն Օրենքով ունեն բազմաթիվ պարտավորություններ՝ պետական տուրքի և հեռարձակման վճարներ, հանրային մուլտիպլեքսում հանրօգուտ բովանդակության հեռարձակում, հայերեն հաղորդումների սահմանված ժամաքանակ, որոնք կրճատվող գովազդային եկամուտների, դիտելիության նվազման պայմաններում նրանց դարձնում են ոչ մրցունակ, հետևաբար նաև՝ դրդում ապավինել քաղաքական ուժերի կամ ֆինանսական խմբերի հովանավորչությանը: Այս ամենը, բնականաբար, բացասական է ազդում տեսալսողական մեդիայի բովանդակության որակի և անկախ գործելու հնարավորության վրա: Մինչդեռ հանրային մուլտիպլեքսն այն կարևոր ռազմավարական հարթակն է, որը պետք է ընկալվի որպես ուղենիշ ողջ մեդիա լանդշաֆտում՝ առաջարկելով բարձր ստանդարտներ և որակ:

2024 թվականին Օրենքով ստեղծված Տեսալսողական մեդիայի ինդուստրիալ կոմիտեն, որը կամավոր անդամության հիմքով գործող ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպություն է, ներկայիս իրավիճակում կարող է մեծ դեր կատարել: Հանձնաժողովը կանխատեսում է, որ Կոմիտեն ոչ միայն լուծելու է հեռուստաչափումների կազմակերպման առաջնային հարցը, ուղիղ կապ է հաստատելու հեռարձակողների և գովազդային ընկերությունների միջև, այլև դառնալու է հեռարձակողների շահերը պաշտպանող միասնական հարթակ:

Հանձնաժողովը լիահույս է, որ իր՝ որպես կարգավորող մարմին, տարիների աշխատանքը, փորձագիտական ներուժը կօգնեն ձևակերպել թվային հաղորդակցության ընդհանուր համակեցության կանոններ, այդ թվում՝ բարենպաստ մեդիաշուկա ստեղծելով, որտեղ լրագրողական որակյալ աշխատանքը կունենա ոչ միայն հանրային արժեք, այլև բարձր գին: Եվ որ ամենակարևորն է՝ ֆինանսական անկախությունը և ինքնաբավությունը կնպաստեն կողմնակալ ու մոլորեցնող բովանդակության արժեզրկմանը, ատելության ու թշնամանքի հրահրման վրա հիմնված ցածրորակ նյութեր ստեղծելու շուկայական անմրցունակությանը:

Հանձնաժողովի կարծիքով՝ իրական տեղեկատվական անկախության համար անհրաժեշտ փոփոխություններից է նաև հանրային մուլտիպլեքսի վարկանիշի բարձրացումն ու խրախուսման մեխանիզմների ճկուն գործարկումը:

3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԿԱԽ, ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում տեսալսողական մեդիածառայություն մատուցող հեռարձակողների, ցանցային օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Հանձնաժողովին վերապահված է նաև փորձագիտական առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև տեղեկատվությանն առնչվող օրենքների, տեսալսողական մեդիաոլորտի քաղաքականության մշակման աշխատանքներին մասնակցելու գործառույթ:

Հանձնաժողովը գործում է ՀՀ Սահմանադրության և օրենսդրության շրջանակներում՝ իր աշխատանքներում առաջնորդվելով կոլեգիալության սկզբունքով և բացառելով արտաքին միջամտությունն ու ազդեցությունը կայացվող որոշումների վրա:

Նախորդ տարի ևս գործադիր, օրենսդիր, հանրային իշխանության, տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչները, քաղաքական ուժերը չեն ուղղորդել կարգավորող մարմնի աշխատանքները, չեն միջամտել կադրային քաղաքականությանը: Հանձնաժողովը պատասխանատվություն է կրել իր կայացրած բոլոր որոշումների համար:

Սա չի նշանակում, որ 2024 թվականին չեն եղել փորձեր այս կամ այն ձևով ազդելու Հանձնաժողովի անդամների քվեարկության կամ որոշումների կայացման վրա: Քանի որ այդպիսի փորձերն արդյունք չեն տվել, կարգավորող մարմինը նպատակահարմար չի համարում հանրային քննարկման դնել այս խնդիրը:

Կարևոր ենք համարում նշել, որ 2024 թվականի նոյեմբերից Հանձնաժողովը գործում է իր ամբողջական կազմով (7 անդամ), ինչը բարձրացնում է կայացրած որոշումների լեգիտիմությունը:

Օրենսդրության համաձայն՝ Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք անցկացվում են դռնբաց (բացառությամբ գաղտնիություն պարունակող և հրապարակման ոչ ենթակա հարցերի): 2024 թվականին կարգավորող մարմինը գումարել է 26 նիստ և 37 աշխատանքային խորհրդակցություն: Հաճախ, հաշվի առնելով հարցի կարևորությունն ու հանրային հետաքրքրությունը, նիստերը ուղիղ հեռարձակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքում, ինչպես նաև ֆեյսբուքյան և յութուբյան էջերում:

2024 թվականին Հանձնաժողովի պաշտոնական կայքը՝ www.tvradio.am, ձևափոխվեց և համալրվեց նոր բաժիններով: Այդ փոփոխությունները թույլ են տալիս հավելյալ տեղեկատվություն հաղորդել հանրությանը, պատշաճ և ժամանակին ներկայացնել կատարված աշխատանքները, դրանց արդյունքները:

Նախորդ տարվա նորամուծություններից էր հանրության հետ ինտերակտիվ կապի ապահովումը: Հանձնաժողովի կայքում գործարկվել է «Դիմում-բողոք» բաժինը, որի նպատակն է հեռարձակվող տեսալսողական բովանդակության հանդեպ ավելի ընդլայնված և փաստարկված հանրային ներգրավվածություն ապահովելը:

Հանձնաժողովն ակնկալում է, որ անհատ քաղաքացիները, հասարակական կազմակերպությունները (հատկապես՝ մասնագիտական ոլորտներ ներկայացնող) կօգտագործեն այս հնարավորությունն ու կնպաստեն հանրային արձագանքման մշակույթի տարածմանը:

Ակտիվ գործում է նաև կարգավորող մարմնի ֆեյսբուքյան էջը՝ https://www.facebook.com/tvradio.Armenia/:

Տարվա ընթացքում կարգավորող մարմինը կազմակերպել է քննարկումներ, սեմինարներ լիցենզավորված և հեղինակագրված Հեռարձակողների, ցանցային օպերատորների, դիստրիբյուտորների, Ինդուստրիալ կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով կազմակերպվել և անցկացվել են ճեպազրույցներ և հարցազրույցներ: Հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաներով պատրաստվել են մամուլի հաղորդագրություններ և տեղեկանքներ: Մասնավորապես՝ Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակվել է մամուլի 86 հաղորդագրություն և 2 հայտարարություն: Տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներում հրապարակվել են Հանձնաժողովի նախագահի, անդամների, անձնակազմի աշխատակիցների հետ անցկացված հարցազրույցներ, վերլուծական հոդվածներ, մեդիաշուկայի վերլուծության մասին շուրջ 3260 նյութ: Հեռարձակող կազմակերպությունների և մեդիամասնագետների համար Հանձնաժողովը պատրաստել և հրապարակել է մեդիաշուկայի հետազոտության արդյունքների վերաբերյալ տեղեկատվական նյութեր:

Հանձնաժողովը վստահեցնում է Ազգային ժողովին և հանրությանը, որ իր առաջնային նպատակն է նոր և արագ փոփոխվող մեդիամիջավայրում վերաձևակերպել պետության, հասարակության, հանրային և մասնավոր հեռարձակողների հարաբերությունները:

4 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման և համացանցի հասանելիության աճի պայմաններում, օրենսդրության կիրարկման հետևանքով առաջացած բազմաթիվ խնդիրներից բացի, Հանձնաժողովն, իր գործառույթներն իրականացնելիս, բախվում է նաև մի շարք նոր մարտահրավերների: Մեկ անգամ ևս արձանագրենք, որ անհրաժեշտություն է առաջացել տեսալսողական մեդիաոլորտը կարգավորող օրենսդրությունը համապատասխանեցնել ժամանակակից պահանջներին:

2021-2023 թվականների տարեկան հաղորդումներում Հանձնաժողովը մանրամասն ներկայացրել է այս խնդիրները: Վերահաստատելով 2023 թվականի տարեկան հաղորդման ընթացքում արտահայտած մոտեցումը՝ Հանձնաժողովը կարևորում է պետության՝ տեսալսողական մեդիաոլորտին առնչվող նոր ռազմավարության մշակման և իրագործման գործընթացի նախաձեռնությունը, որի առանցքային բաղադրիչը համապատասխան օրենսդրական փոփոխություններն են:

Հանձնաժողովը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն է ներկայացրել «**Տեսալսողական մեդիայի կարգավորումը թվային դարաշրջանում**» առաջարկների փաթեթը: Այդ առաջարկների հիման վրա կարող է մշակվել ծրագիր, որը թույլ կտա իրականացնել չափազանց կարևոր ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ձևավորել միասնական տեղեկատվական համակարգ, բավարարել հանրության՝ որակյալ և հավաստի տեղեկատվություն ստանալու պահանջը, նվազեցնել ապատեղեկատվությունը, «ֆեյքային նորությունները», պաշտպանել Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ինքնիշխանությունը:

Օրենսդրական փոփոխությունների հիմնական ուղղությունները

1. **Կարգավորման շրջանակի ընդլայնում և կանոնակարգերի ներդաշնակեցում՝ հեռարձակողների և առցանց տեսալսողական մեդիայի միջև**

- Տեսալսողական մեդիաոլորտում իրավական միջավայրի ներդաշնակեցումը ենթադրում է գործող կարգավորումների համաչափ կիրառում, ինչպես ավանդական հեռարձակողների, այնպես էլ առցանց մեդիա հարթակների նկատմամբ:

- Օրենսդրական փոփոխությունները նախատեսում են մեդիաոլորտի արագ փոփոխվող միջավայրին համահունչ կարգավորման մեխանիզմներ, որոնք կհամապատասխանեն միջազգային լավագույն փորձին և հայաստանյան համատեքստին:
- Առաջարկվող մեխանիզմները կերաշխավորեն, որ հեռուստանման մեդիածառայություն (TV-like media) մատուցողները կունենան այնպիսի իրավական պարտավորություններ, որոնք համարժեք են ավանդական մեդիածառայություն մատուցողների նկատմամբ կիրառվող պահանջներին:

2. Ատելության խոսքի և ապատեղեկատվության դեմ պայքար՝ հստակ չափանիշների սահմանմամբ

- Օրենսդրորեն սահմանված հստակ չափանիշների ներդրմամբ հնարավոր կլինի սահմանափակել ապատեղեկատվության, ատելության խոսքի և հասարակական շահերին վնասող տեղեկատվության տարածումը՝ համապատասխան իրավական հետևանքներով:
- Առաջարկվող իրավակարգավորումները կբարձրացնեն տեղեկատվական հոսքերի նկատմամբ հանրային վստահությունը՝ ապահովելով հանրային շահերի պաշտպանությունը:

3. Օտարերկրյա հեռուստածրագրերի հեռարձակման սահմանափակում

- Անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, որոնք կբացառեն այլ երկրների քաղաքական օրակարգերի սպասարկումը հանրային մուլտիպլեքսում: Բացառություն կարող է արվել միայն այն օտարերկրյա հեռուստածրագրերին, որոնք հանրօգուտ բնույթ են կրում (մանկական, մշակութային, կրթական, սպորտային):
- Հայաստանի Հանրապետությունում ցանցային օպերատորների փաթեթներում վերահաղորդվում են օտարերկրյա այնպիսի տեսալսողական ծրագրեր, որոնց բովանդակությունը խախտում է ՀՀ օրենսդրությունը, պարունակում է ազգային, կրոնական խտրականության դրվագներ, բռնության տեսարաններ, պատերազմ հրահրելու կոչեր և այլն: Հետևաբար, յուրաքանչյուր օտարերկրյա տեսալսողական ծրագիր, նախքան վերահաղորդումը սկսելը, պետք է անցնի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության գործընթաց, ինչը կփաստի, որ ներառված արտադրանքը համապատասխանում կամ չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը:

4. Տեսալսողական մեդիայի սեփականատերերի և ֆինանսավորման թափանցիկություն

- Անհրաժեշտ է ընդունել և կիրառել օրենսդրական կարգավորումներ, որոնք կսահմանեն ԵԽԽԿ հանձնարարականում թվարկված տեղեկատվության կիրարկելի բացահայտումը:
- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2017x) XX հանձնարարականն անդամ պետություններին՝ լրատվամիջոցների բազմակարծության և դրանց սեփականատերերի թափանցիկության վերաբերյալ սահմանում է չափանիշներ, որոնք միտված են նպաստելու անդամ պետություններում լրատվամիջոցների ֆինանսավորման աղբյուրների թափանցիկության բարձր մակարդակի ապահովմանը:

- Սեփականատերերի և ֆինանսական աղբյուրների համապարփակ պատկերը թույլ է տալիս գնահատել լրատվական դաշտի կենսունակությունը և հասկանալ, թե քաղաքական կամ բիզնես ուժերը, լրատվամիջոցների սեփականատերերը, գովազդատուները, օտարերկրյա ներդրողները, միջազգային կազմակերպությունները, հիմնադրամներն ինչ չափով են ազդում խմբագրական և կադրային քաղաքականության և խմբագրակազմի որոշումների կայացման վրա:

5. Պետության կողմից աջակցության գործիքակազմի կիրառում՝ բազմազան և բարձրորակ բովանդակության ստեղծման և հեռարձակման նպատակով

- Եթե պետությունը չմիջամտի առաջացած ճգնաժամային իրավիճակին, հանրային մուլտիպլեքսը շատ արագ կկորցնի իր դերն ու նշանակությունը, իսկ առաջացած բացը կլցվի ապատեղեկատվություն, ատելության խոսք, անորակ բովանդակություն տարածող և/կամ այլ պետությունների քաղաքական շահերը սպասարկող մեդիաների կողմից: Հանրային մուլտիպլեքսի թուլացումը կհանգեցնի նաև համացանցային կամ մալուխային հեռարձակում ունեցող հարթակների դիտելիության աճին, որոնց բովանդակության նկատմամբ Հանձնաժողովը կամ չունի կարգավորիչ գործառույթներ, կամ դրանք խիստ սահմանափակ են:
- Հանձնաժողովն, այս նպատակով, առաջարկում է ստեղծել աջակցման ու զորեղացման հիմնադրամ, որի առանցքային գաղափարը կներառի խրախուսման ու հեռանկարային քայլերի հաջորդականություն, ինչի արդյունքում կբարձրանա հանրային մուլտիպլեքսի կշիռն ու գրավչությունը, հանրօգուտ բովանդակության ծավալը: Ներկա պայմաններում միայն պետության աջակցությամբ է հնարավոր մասնավոր հեռարձակողների եթերում ստեղծել բարձրորակ և հանրային հետաքրքրություններին ծառայող, իրավական գիտելիքները բարձրացնող կրթական, մանկական ու մշակութային բովանդակություն:
- Պետության և հանրային մուլտիպլեքսում ընդգրկված մեդիայի համագործակցությունը կարող է դառնալ կարևոր գործոն, որը մի կողմից կնպաստի հանրային լարման (բևեռացման) թուլացմանը և բարեփոխումների տեղեկատվական ուղեկցությանը, մյուս կողմից՝ կբարձրացնի լրատվամիջոցների իրական անկախությունը տարբեր քաղաքական ու բիզնես միավորումների շահերից: Հանձնաժողովն առաջարկում է դիտարկել նաև մուլտիպլեքսի սլոթերի քանակի կրճատման հնարավորությունը՝ տեսալսողական պատկերի որակը բարձրացնելու հեռանկարով:

6. Օրենսդրական կարգավորման արդյունքում իրավական որոշակիության սկզբունքի ապահովում

- Առաջարկվող իրավական կարգավորումները կվերացնեն օրենսդրական բացերը և կբացառեն իրավակիրառական տարընկալումները՝ խստորեն պահպանելով իրավական որոշակիության սկզբունքը:
- Մեդիաոլորտի նոր օրենսդրական մեխանիզմները կերաշխավորեն կանխատեսելի իրավական դաշտ և կբարձրացնեն իրավական կարգավորումների արդյունավետությունը:

5 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել է 102 լիցենզավորված ընկերություն՝

102	41	տեսալսողական մեդիածառայություն մատուցող,
	61	ցանցային օպերատոր

Տեսալսողական մեդիածառայություն մատուցող 41 ընկերության կողմից հեռարձակվել է՝

50	21	տեսալսողական ծրագիր
	29	լսողական ծրագիր

Նույն ժամանակահատվածում գործել է նաև հեղինակազորված 54 ընկերություն, որոնցից 30-ը լիցենզավորված են:

Օրենքի համաձայն՝ առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվել է Հանրային հեռարձակողի՝

- 3 տեսալսողական ծրագիր,
- 4 լսողական ծրագիր,

իսկ միջազգային պայմանագրերի հիման վրա՝

- 4 տեսալսողական ծրագիր,
- 2 լսողական ծրագիր:

Գծապատկեր 1. Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնողներ







Հանրային հեռարձակողներ

Օտարերկրյա տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ

5.1 Հեղինակազորման գործընթաց

«Հեղինակազորումը կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տվող փաստաթղթի տրամադրումն է» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 23-րդ կետ):

Հեղինակազորման փաստաթուղթը՝ վկայագիրը, Հանձնաժողովի կողմից տրամադրվում է պարզեցված ընթացակարգով և անժամկետ:

Հեղինակազորումն Օրենքով կարգավորվել է 2020 թվականից՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Օրենքի դրույթները գործնականում կիրառելու արդյունքում ի հայտ են եկել խնդիրներ, որոնց լուծման համար հեղինակազորումը կարգավորող դրույթների վերանայման անհրաժեշտություն է առաջացել:

Հեղինակազորումն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հնարավորություն է տալիս ցանցային օպերատորների միջոցով առանց լիցենզիայի հեռարձակել իրենց տեսալսողական ծրագրերը, իսկ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի հիմնադրման դեպքում՝ նաև մասնավոր մուլտիպլեքս օպերատորի միջոցով: Հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթներին մասնակցելու համար հեղինակազորումը պարտադիր պայման է:

Գործնականում հեղինակազորված ընկերությունների մի մասը չի գտնվում կարգավորող պետական մարմնի լիարժեք վերահսկողության ներքո: Վերջիններս հեղինակազորվում են, սակայն հետագայում կարող են ցանցային օպերատորների միջոցով հեռարձակում չիրականացնել, կամ հեղինակազորվում են բացառապես լիցենզավորման մրցույթներին մասնակցելու նպատակով: Նման պարագայում հեղինակազորման վերաբերյալ գործող իրավական կարգավորումները չեն ապահովում նշված տեսալսողական ծառայություն մատուցողների գործունեության նկատմամբ համապարփակ վերահսկողության հնարավորություն:

Հանձնաժողովի կարգավորման շրջանակներից դուրս է նաև այն ընկերությունների գործունեությունը, որոնք հեռարձակում են տեսալսողական բովանդակություն համացանցի միջոցով:

Հրատապ լուծում պահանջող խնդիրներից է համացանցով հեռուստանման մեդիածառայություններ (TV-like) մատուցողների գործունեության իրավական կարգավորումը: Թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, երբ համացանցը լայն հասանելիություն ունի, մեդիաոլորտի դինամիկ զարգացման պայմաններում հեռուստանման մեդիան մեծ տարածում և ճանաչում է ձեռք բերել՝ ապահովելով լայն լսարան, բարձր դիտելիություն և հետևորդների շատ մեծ քանակ, սակայն բովանդակության նկատմամբ վերահսկողությունը օրենսդրությամբ սահմանված չէ:

Հարկ է նշել, որ և՛ համացանցով, և՛ Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից հեռարձակվող տեսալսողական բովանդակությունը նախատեսված է նույն լսարանի համար, սակայն դրանց նկատմամբ կիրառվող օրենսդրական կարգավորումները էականորեն տարբերվում են: Մասնավորապես՝ Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները, ի տարբերություն համացանցով հեռուստանման մեդիածառայություններ մատուցողների, ունեն օրենսդրությամբ սահմանված պարտավորություններ, այդ թվում՝ լիցենզիայի համար տարեկան պետական տուրքի վճարում, մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների առնվազն 20 տոկոսի ապահովում, մանկական, լրատվական տեսալսողական հաղորդումները հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով հեռարձակման ապահովում, մի շարք ապրանքների և ծառայությունների գովազդելու արգելք և այլն: Միևնույն ժամանակ, համացանցով հեռուստանման մեդիածառայություններ մատուցողները նման պարտավորություններից և պահանջներից ազատված են, ինչը նրանց համար գովազդային շուկայում ստեղծում է լրացուցիչ մրցակցային առավելություններ:

Կարծում ենք, որ հեղինակազորման կարգավորման դրույթները ենթակա են հիմնարար փոփոխությունների, որոնց արդյունքում հնարավոր կլինի վերացնել առկա խնդիրները:

Հեղինակազորման շրջանակում 2024 թվականին Հանձնաժողովի կողմից հեղինակազորվել է 2 իրավաբանական անձ, անվան փոփոխման հիմքով՝ փոփոխություն է կատարվել 2 հեղինակազորման վկայագրում, դիմումի համաձայն դադարեցվել է 3 հեղինակազորման վկայագրի գործողությունը:

Աղյուսակ 1. 2024 թվականին տրամադրված հեղինակազորման վկայագրեր

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՏՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ
«ԼԱՅՔ ԹԻՎԻ ՌԱԴԻՈ» ՍՊԸ	19.02.2024 թ.
«ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒԶ» ՍՊԸ	14.11.2024 թ.

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել է 54 հեղինակազորված ընկերություն, որոնց տեսալսողական ծրագրերի թիվը 114 է (***տես՝ Հավելված 1***): Հեղինակազորված ընկերությունների 38 տեսալսողական ծրագիր հեռարձակվել է հանրային մուլտիպլեքսում:

Աղյուսակ 2. 2024 թվականին դադարեցված հեղինակազորման վկայագրեր

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ
«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ	12.04.2024 թ.
«ԽՈՒՍՏՈՒԹ ԷՖ ԷՄ» ՍՊԸ	12.04.2024 թ.
«168 ԺԱՄ» ՍՊԸ	13.09.2024 թ.

5.2 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

2024 թվականին տեսալսողական մեդիածառայություն մատուցող 20 լիցենզավորված ընկերություն հանրային մուլտիպլեքս ցանցում հեռարձակել է 21 տեսալսողական ծրագիր՝ 5-ը հանրապետական, 6-ը մայրաքաղաքային և 10-ը մարզային սփռման:

Գծապատկեր 2. Հանրային մուլտիպլեքս ցանցում հեռարձակվող լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրեր



Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

«ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ

«Ա-ԹԻՎԻ» ծրագիր
«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ

ՖԱՍԹՍՊՈՐՏՍ» ծրագիր
«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ

Մայրաքաղաքային սփոռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր
«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ

«21 ԹԻՎԻ» ծրագիր
«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ծրագիր
«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ

«:ԲՈՒՆ ԹԻՎԻ» ծրագիր
«:ԲՈՒՆ» գիտամշակութային հիմնադրամ

«5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիր
«ՇԱՐԿ» ՍՊԸ

«ՆՈՒՌ» ծրագիր
«ԱՌՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Մարզային սփոռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

Արագածոտնի մարզ
«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ծրագիր
«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ

Արմավիրի մարզ
«ԱՐՄԱ ԹԻՎԻ» ծրագիր
«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ

Լոռու մարզ
«ՖՈՐՏՈՒՆԱ» ծրագիր
«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ

Շիրակի մարզ
«ՑԱՅԳ» ծրագիր
«ՑԱՅԳ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ
«ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ» ծրագիր
«ԶԱԳԵԶՈՐ»
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՍՊԸ

Արարատի մարզ
«ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ» ծրագիր
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ
«ԳԵՂԱՄԱ» ծրագիր
«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ
ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ

Կոտայքի մարզ
«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ծրագիր
«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ

Սյունիքի մարզ
«ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ» ծրագիր
«ԶԱԳԵԶՈՐ»
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՍՊԸ

Տավուշի մարզ
«ՏԱՎՈՒՇ ԹԻՎԻ» ծրագիր
«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

5.3 Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

2024 թվականին լսողական մեդիածառայություն մատուցող 24 լիցենզավորված ընկերության կողմից հեռարձակվել է 29 լսողական ծրագիր. 3-ը՝ Հայաստանի Հանրապետության, 16-ը՝ Երևան քաղաքի և 10-ը՝ մեկ մարզի տարածքում:

Գծապատկեր 3. Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների տեսալսողական ծրագրերը



Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

«ՌԱԴԻՈ ՋԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՊՌՈ»ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ

«ԵՐԵՎԱՆ ԷՖԷՄ» ծրագիր
«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ

Երևան քաղաքում սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ծրագիր
«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ

«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ծրագիր
«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ

«ԳՈՐԾԱՐԱՐ ԱԼԻՔ ԷՖԷՄ 106.5» ծրագիր
«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ

«ԷՖԷՄ-105.5» ծրագիր
«ՖՄ-105.5» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՋԱԶ ԷՖԷՄ» ծրագիր
«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ

«ՔԻՍՍ ԷՖԷՄ» ծրագիր
«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ

«ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ծրագիր
«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ծրագիր
«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ՓՈՓ ԷՖԷՄ» ծրագիր
«ԷՅ ԴԻ ԹԻ» ՍՊԸ

«ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

«ԳՈ.ՍՊՈՐՏ» ծրագիր
«ՍՊՈՐՏ ՄԻՔՍ» ՍՊԸ

«ՄԵԿ ԷՖԷՄ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

«ԶԱՐԿ ԷՖԷՄ» ծրագիր
«ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

Արարատի մարզ

«ԱՐԱՐԱՏ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

Լոռու մարզ

«ՄԻԳ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ

«ՄԵԿ ԷՖԷՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Տավուշի մարզ

«ՏԱՎՈՒՇ ԷՖԷՄ» ծրագիր
«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ

«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

Շիրակի մարզ

«ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» ծրագիր
ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ

«ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

Սյունիքի մարզ

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ» ծրագիր «ԷՖ-ԷՄ» *ՍՊԸ*

5.4 Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

Օրենքի համաձայն՝ 2024 թվականին առանց լիցենզիայի հեռարձակում են իրականացրել Հանրային հեռարձակողները, միջազգային պայմանագրերի հիման վրա հեռարձակողները:

Հանրային հեռարձակողներ

2024 թվականին Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվել են Հանրային հեռարձակողի 3 տեսալսողական՝ հանրապետական սփոման «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ», «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» և «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի «ՇՈՂԱԿԱԹ», ինչպես նաև 4 լսողական՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի հանրապետական սփոման «ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» և մայրաքաղաքային սփոման «ԻՄ ՌԱԴԻՈ», «ՎԷՄ» կրթական-մշակութային և «ԱՐԵՎԻԿ» մանկական ծրագրերը:

2024 թվականի մայիսի 22-ին Օրենքում կատարված փոփոխության արդյունքում՝ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթը փոխարինվել է հանրապետական սփռում ապահովող սլոթով, և «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիրը 2024 թվականի հունիսի 9-ից հեռարձակվում է հանրապետական սփոմամբ: Միաժամանակ, հիմք ընդունելով Օրենքի նշված փոփոխությունը՝ Հանձնաժողովը ուժը կորցրած է ճանաչել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման մայրաքաղաքային սփոման լիցենզիան:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՇՈՂԱԿԱԹ» ծրագիր
«ՀՈԳԵՎՈՐ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՎԷՄ» կրթական-մշակութային ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՐԵՎԻԿ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԻՄ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

Օտարերկրյա տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ

2021 թվականից հանրային մուլտիպլեքսում օտարերկրյա տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացվում է առանց լիցենզիայի՝ միջազգային պայմանագրերի հիման վրա:

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 30-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հեռարձակվում են հանրապետական սփռման 1 տեսալսողական՝ «ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» և մայրաքաղաքային սփռման 2 տեսալսողական՝ «ՌՈՍԻՅԱ-Կ», «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ» հեռուստածրագրերը:

Ըստ Համաձայնագրի, Հանձնաժողովն իրականացրել և իրականացնում է հանրային մուլտիպլեքսում Ռուսաստանի Դաշնության հեռուստածրագրերի գործունեության մշտադիտարկում՝ Համաձայնագրի 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված պահանջների խախտման փաստերն արձանագրելու նպատակով, որի արդյունքները տրամադրվում են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը՝ քննարկման և հետագա գործողություններ իրականացնելու համար:

«ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» ծրագիր

«ՌՈՍԻՅԱ-Կ» ծրագիր

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ.
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ» ծրագիր

Միջազգային պայմանագրերի հիման վրա հեռարձակվում են նաև մայրաքաղաքային սփոման «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» տեսալսողական ծրագիրը (ռուսերեն) և «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» (ռուսերեն) և «Էղ Էֆ Ի» (RFI) (Ֆրանսիա, ֆրանսերեն) լսողական ծրագրերը:

«ՄԻՐ» ծրագիր
«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«ՄԻՐ» լսողական ծրագիր
«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«RFI» «ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԱԴԻՈ»
լսողական ծրագիր

5.5 Մալուխային կամ այլ ցանց օգտագործող ցանցային օպերատորներ

«Ցանցային օպերատորը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 5-րդ կետ):



Գծապատկեր 4. Մալուխային ցանցերում տարածվող տեսալսողական ծրագրերն ըստ արտադրության երկրի

Ցանցային օպերատորները՝ տեսալսողական տեղեկատվություն տարածողները, միայն ազդանշանն օգտատերերին հասցնողներն են և տեսալսողական արտադրանքի բովանդակության համար պատասխանատվություն չեն կրում:

Օրենքով նվազեցվել է ցանցային օպերատորների լիցենզավորման հետ կապված վարչարարությունը. ցանցային օպերատորի գործունեության լիցենզիան տրամադրվում է առանց մրցույթի՝ պարզեցված ընթացակարգով:

Ընթացակարգի պարզեցումն ողջունելի է, սակայն մալուխային ցանցերով տարածվող օտարերկրյա տեսալսողական ծրագրերը երբեմն սպառողներին պարտադրում են մեր հանրային և պետական շահերի հետ չհամընկնող տեղեկատվական օրակարգեր, որոնց դեմ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար Հանձնաժողովն օրենսդրությամբ նախատեսված կարգավորման գործիքակազմ չունի:

Տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնող 61 ցանցային օպերատորից 12-ը գործել է Հայաստանի Հանրապետության, 10-ը՝ Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 6-ը՝ Երևան քաղաքի, 2-ը՝ մեկից ավելի մարզերի և 31-ը՝ մեկ մարզի տարածքում (տես՝ Հավելված 2):

2024 թվականին Հանձնաժողովի կողմից տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 7 լիցենզիա:

Գծապատկեր 5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի թեմատիկ ուղղվածությունը

62 ԺԱՄԱՆՑԱՅԻՆ	**64** ԿԻՆՈ ԵՎ ՍԵՐԻԱԼ	**36** ԸՆԴՀԱՆՈՒՐ
42 ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ	**28** ԼՐԱՏՎԱԿԱՆ	**30** ՄԱՆԿԱԿԱՆ
15 ՄԱՐԶԱԿԱՆ	**43** ԱՅԼ	

Գծապատկեր 6. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի հեռարձակման լեզուն



Գծապատկեր 7. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի հեռարձակման լեզվի՝ 2019-2024 թվականների համեմատական պատկերը



5.6 Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորներ

«Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձն է» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 10-րդ կետ):

2024 թվականին, Օրենքով Հանձնաժողովին վերապահված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել են տեսալսողական ծրագրերի իրավատերերի հետ կնքված 26 պայմանագիր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր, որի արդյունքում հաստատվել է 34 տեսալսողական ծրագրի վերաբերյալ 12 ծանուցում: 2 տեսալսողական ծրագրի մասով ներկայացված ծանուցումը մերժվել է՝ թերի լինելու հիմքով, ինչը վերացվելուց հետո ընկերության կողմից կրկին ներկայացված ծանուցումը հաստատվել է: Արձանագրենք, որ սա Օրենքով սահմանված միակ հիմքն է, երբ Հանձնաժողովը կարող է չհաստատել ներկայացված ծանուցումը:

Օրենքով առկա կարգավորումները չեն նախատեսում իրավական այնպիսի հիմքեր, որոնք հնարավորություն կընձեռեն կարգավորող պետական մարմնին՝ չտրամադրել դիստրիբյուտորին գործունեություն ծավալելու անհրաժեշտ թույլտվություն, կամ չկան այն իրավական հիմքերը, որոնց պարագայում կարող է դադարեցվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորին արդեն իսկ տրամադրված թույլտվությունը:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի գործունեություն է իրականացրել 9 ընկերություն, որոնց տեսալսողական ծրագրերի ընդհանուր թիվը 201 է: Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները Հանձնաժողովի կարգավորման ներքո են գտնվում՝ 2020 թվականից՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

5.7 Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվությունների տրամադրման գործընթաց

Օրենքով՝ Հանձնաժողովին վերապահված ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվությունների տրամադրման գործառույթը լիարժեքորեն իրականացվում է 2021 թվականի հոկտեմբերից, երբ Հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է ոչ գծային հեռարձակողների՝ առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու ընթացակարգը: Նշված ընթացակարգի սահմանման արդյունքում՝ կարգավորող պետական մարմնին հնարավորություն է տրվել ապահովել ոչ գծային հեղինակային և հարակից իրավունքի սուբյեկտ հանդիսացող իրավատերերի իրավունքների պաշտպանությունը:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման թույլտվություն է ստացել 6 ոչ գծային հեռարձակող:

Աղյուսակ 3. Ոչ գծային հեռարձակողներ

«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Տավուշի մարզեր
«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն
«ԹԻՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն
«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն
«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն

6 ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հանձնաժողովը հանրային մուլտիպլեքսում (այսուհետ՝ Մուլտիպլեքս) տեսալսողական և լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթներ է հայտարարում Մուլտիպլեքսում սլոթի (հաճախականության) օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու, նոր կամ ազատ սլոթ առաջանալու դեպքում:

Մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթներն անցկացվել են 2021-2023 թվականներին, որոնց արդյունքում լիցենզիաները տրամադրվել են 7 տարի ժամկետով: Լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթների զգալի մասը կայացել է 2017 թվականին. 10 տարով տրամադրված լիցենզիաների գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2027 թվականը:

2024 թվականին նոր կամ ազատ սլոթ չի առաջացել, հետևաբար, լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվել:

Մարզերում, 2021-2023 թվականներին անցկացված լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթների արդյունքում, ավելացել է լսողական մեդիածառայություն մատուցողների թիվը և ընդլայնվել լսողական մեդիածառայություն մատուցողների հեռարձակումը. մարզային լսողական ծրագրեր են հեռարձակվում Հայաստանի Հանրապետության 8 մարզում: Մարզային լսողական ծրագրերի հեռարձակում չի իրականացվում Արմավիրի և Կոտայքի մարզերում: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տրամադրված տեղեկատվության համաձայն՝ նշված մարզերում ազատ հաճախականություններ առկա չեն:

Հավելենք, որ լսողական ծրագրեր հեռարձակողներին տրամադրված հաճախականությունների շահագործման հետ պարբերաբար խնդիրներ են առաջանում: Մասնավորապես՝ հարևան երկրներին պատկանող ռադիոկայանները և այլ ռադիոտեխնիկական սարքավորումները տեխնիկական դժվարություններ են առաջացնում հաճախականություններն անխոչընդոտ օգտագործելիս: Միաժամանակ, ինչպես տեղեկացնում են լսողական ծրագրեր հեռարձակողները, ավտոմեքենաների ռադիոընդունիչները կարողանում են ընդունել միայն կենտ նիշով հաճախականություններ, որի հետևանքով տրամադրված հաճախականությունները պարբերաբար փոխելու անհրաժեշտություն է առաջանում:

Վերը նշված խնդիրներով պայմանավորված՝ դիմումների հիման վրա 2021-2024 թվականների ընթացքում Վանաձոր, Ապարան, Վեդի, Գյումրի և Ախթալա բնակավայրերում 7 հաճախականությունների փոփոխություն է կատարվել՝ համաձայնեցնելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ:

6.1 2024 թվականի լիցենզավորման, լիցենզիայի գործողության դադարեցման ցուցանիշներ

2024 թվականին Հանձնաժողով է ներկայացվել ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու 7 դիմում, որոնք բավարարվել են: Տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 2 լիցենզիա՝ Հայաստանի Հանրապետության, 1 լիցենզիա՝ մեկից ավելի մարզերի տարածքում և 4 լիցենզիա՝ մեկ մարզի տարածքում սփռման համար:

Աղյուսակ 4. 2024 թվականին տրամադրված ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաներ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	12.01.2024թ.-12.01.2034թ.
ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՅՐԻՅԱՆ ԱՁ	ՀՀ Կոտայքի մարզ	08.02.2024թ.-08.02.2034թ.
«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Լոռու մարզեր	19.04.2024թ.-19.04.2034թ.
«ՆԵՏՔՈՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	05.09.2024թ.-05.09.2034թ.
«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	10.10.2024թ.-10.10.2034թ.
ԿԱՐԵՆ ԱՐԱՅԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ ԱՁ	ՀՀ Կոտայքի մարզ	11.12.2024թ.- 11.12.2034թ.
«ՆՅՈՒ ՎԵՅՎ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	26.12.2024թ.-26.12.2034թ.

2024 թվականին՝ լիցենզավորման գործառույթի շրջանակում, Հանձնաժողովի կողմից վերաձևակերպվել է 4 լիցենզիա՝ անվան և գտնվելու վայրի փոփոխության հիմքերով, լիցենզիայի կրկնօրինակ է տրամադրվել 1 ընկերության: Կասեցվել է 3 լիցենզիայի գործողություն, 2-ի կասեցումն այնուհետև վերացվել է:

2024 թվականին, Օրենքում կատարված փոփոխության հիմքով, դադարեցվել է հանրային մուլտիպլեքսում Հանրային հեռարձակողի սլոթի օգտագործման մայրաքաղաքային սփռման լիցենզիայի գործողությունը:

2024 թվականին դադարեցվել է ցանցային օպերատորի գործունեության 8 լիցենզիա. 4-ը՝ դիմումի համաձայն, 3-ը՝ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով և 1-ը՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելու հիմքով:

Աղյուսակ 5. 2024 թվականին դադարեցված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	ք. Երևան	Օրենքում կատարված փոփոխության համաձայն [1]

Աղյուսակ 6. 2024 թվականին դադարեցված ցանցային օպերատորի գործունեության լիցենզիաներ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՈՒՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ
«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	ժամկետը լրանալու հիմքով
«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	դիմումի համաձայն
«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	դիմումի համաձայն
«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Տավուշի մարզ	լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելու հիմքով
ՄԱՆՎԵԼ ՎԱՂԻՆԱԿԻ ՓԱՇԻԿՅԱՆ ԱՁ	ՀՀ Արագածոտնի մարզ	դիմումի համաձայն
«ՍՄԱՅԼ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ժամկետը լրանալու հիմքով
«ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	դիմումի համաձայն
«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	ժամկետը լրանալու հիմքով

7 ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

7.1 Ընդհանուր տեղեկություններ մշտադիտարկման մասին

«Մշտադիտարկումը կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների և օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկումն է» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 26-րդ կետ):

[1] *Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության հանրային մուլտիպլեքսում մայրաքաղաքային ստոռում ապահովող սլոթը փոխարինվել է հանրապետական ստոռում ապահովող սլոթով, և մայրաքաղաքային ստոռման լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել:*

2024 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր՝ Ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության ստորաբաժանման տեխնիկական գործիքակազմի կարողության շրջանակում ընտրանքային սկզբունքով իրականացրել է Հանձնաժողովի իրավասության սուբյեկտ հանդիսացող հեռարձակողների կողմից տարածվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր տևողությամբ: Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվել է ուղղակի դիտարկման, իսկ ցանցային օպերատորների դեպքում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Չնայած Հանձնաժողովի տեխնիկական շարունակական վերազինումներին, այդուհանդերձ, արհեստական բանականության սրընթաց զարգացումն ու ինտեգրումը տարբեր ոլորտներին, առավել առարկայական ու արդիական է դարձրել մեր աշխատանքային քննարկումների օրակարգը՝ Հանձնաժողովում արհեստական բանականության տարրերով օժտված մեդիա մոնիտորինգի ծրագրային ապահովում ներդնելու վերաբերյալ, ինչը հնարավորություն կընձեռի Հանձնաժողովին իր խիստ սահմանափակ ռեսուրսներով առավել թիրախային դիտարկումներ իրականացնել օրեցօր ավելացող մեդիա հոսքերին համընթաց:

Հանձնաժողովի վերահսկողական գործառույթի շրջանակներում 2024 թվականին տեղում դիտարկման նպատակով իրականացվել են գործուղումներ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում: Գործուղումների արդյունքում տեղում դիտարկման է ենթարկվել 42 ցանցային օպերատոր, որոնցից 19-ի դեպքով կազմված արձանագրությունների հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ:

Այս համատեքստում կրկին անհրաժեշտ ենք համարում բարձրաձայնել առկա խնդիրներից մի քանիսը.

1. Անհավասար մրցակցային պայմաններ.

Լիցենզավորված ընկերությունները և համացանցում գործունեություն իրականացնող կազմակերպությունները ստեղծում և մատուցում են նույնատեսակ ծառայություններ: Ցանցային օպերատորները վճարում են օրենքով սահմանված տուրքերն ու հարկերը, պայմանագրեր են կնքում դիստրիբյուտորների հետ՝ տեսալսողական ծրագրերը վերահաղորդելու համար (ինչը բավականին մեծ վճարներ է նախատեսում), իսկ համացանցում գործող տարբեր օպերացիոն համակարգերի համար նախատեսված ծրագրային բազմաթիվ հավելվածների միջոցով առաջարկվող, այդ թվում՝ օտարերկրյա ծագման, տեսալսողական ծրագրերի նկատմամբ վերահսկողությունը դուրս է Հանձնաժողովի լիազորություններից, իսկ ներկայացվող տեսալսողական ծրագրերի գին-քանակ հարաբերակցության առումով՝ նաև հայաստանյան դաշտում գործող լիցենզավորված շատ ցանցային օպերատորների հետ հավասար մրցակցությունից:

Հայաստանի Հանրապետության տարածքում անվճար հիմունքներով և անօրինական կերպով օգտագործվող հավելվածների մատուցած ծառայությունների խնդրով Հանձնաժողովը 2024 թվականին մի քանի անգամ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ներքին գործերի նախարարություն՝ ուսումնասիրելու, համապատասխան լուծում և ընթացք տալու խնդրին, սակայն որևէ գործընթաց այս ուղղությամբ չի կատարվել:

2. Վարչական տույժերի անհամաչափություն.

Տեղում դիտարկման արդյունքում ի հայտ եկած թերացումների շարունակական բնույթը հիմք է տալիս պնդելու, որ ցանցային օպերատորների կողմից ոչ պատշաճ իրավապայմանագրային դաշտում գործելու համար սահմանված վարչական տույժերն անհամարժեք նվազ են տարբեր տեսալսողական ծրագրերի իրավատերերի կողմից դրանք վերահաղորդելու համար սահմանած վճարներից, ինչի արդյունքում ցանցային օպերատորները հաճախ նախընտրում են խախտել օրենքը և վճարել տույժը՝ իրավապայմանագրային հարաբերությունների շրջանակում գործելու փոխարեն: Օրինակ՝ եթե տեղում դիտարկման արդյունքում հարուցված վարչական վարույթի շրջանակներում պարզվում է, որ այս կամ այն ցանցային օպերատորն առանց տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ պայմանագրի առկայության վերահաղորդում է՝ մեկ տեսալսողական ծրագիր, թե՝ տասը, այդ իրավախախտման համար հիմնականում կիրառվում է 50 000 ՀՀ դրամ վարչական տույժ[2]: Մինչդեռ տեսալսողական մեկ ծրագրի վերահաղորդման համար վճարվող գինը կարող է կրկնակի կամ եռակի գերազանցել վարչական տույժի չափը:

[2] *Ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, հոդված 57, մաս 6):*

Արձանագրենք նաև, որ երբեմն այդ չնչին տուգանքի վճարումը ևս հետաձգվում է, երբ պատասխանատվության ենթարկված ցանցային օպերատորները դատական կարգով բողոքարկում են Հանձնաժողովի համապատասխան որոշումները: Ծանրաբեռնված դատական համակարգի պայմաններում վարչական գործերի քննությունը կարող է տևել մի քանի տարի:

Կարգավորող մարմինը գտնում է, որ անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, որպեսզի հիշյալ իրավախախտումների պատասխանատվության միջոցները լինեն համաչափ: Միջգերատեսչական տարբեր աշխատանքային քննարկումների ընթացքում Հանձնաժողովը հանդես է եկել առաջարկությամբ՝ վերանայել կիրառվող պատասխանատվության միջոցը և սահմանել պատասխանատվություն առանց համապատասխան իրավական հիմքերի առկայության տեսալսողական յուրաքանչյուր ծրագրի վերահաղորդում իրականացնելու համար: Համապատասխան առաջարկներ են ուղարկվել նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն:

Օրենքով սահմանված կարգով Հանրային հեռարձակողը եռամյա կտրվածքով Հանձնաժողով է ներկայացրել տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություններ: Ուսումնասիրության արդյունքում կարգավորող մարմինը փաստում է, որ 2024 թվականին Հանրային հեռարձակողն ապահովել է հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը:

Հանձնաժողովը, կարևորելով Հեռարձակողների ծրագրերում հանրօգուտ՝ մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների առկայությունը, հետևողական է Օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասով ամրագրված պահանջի պահպանմանը՝ «Լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը»:

Հանձնաժողովը 2023 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրաձայնել էր, որ հանրօգուտ բովանդակության պատրաստման/գնման և սփռման պահանջի կատարումը լիցենզավորված հեռարձակողներն ապահովում են սեփական միջոցների հաշվին, մինչդեռ բազմաթիվ եվրոպական երկրներում հանրօգուտ բովանդակության ստեղծմանն ու տարածմանն օժանդակելու նպատակով մեդիա հեռարձակողների համար գործում են որակյալ բովանդակություն պատրաստելու և տարածելու խրախուսման տարատեսակ գործիքներ՝ ֆինանսական, տեխնիկական, վարչարարական: Նշել էինք նաև, որ անհրաժեշտ է նման գործիքներ ներդնել նաև Հայաստանի Հանրապետությունում գործող լիցենզավորված հեռարձակողների դեպքում: Ընդգծենք, որ 2024 թվականին սկիզբ են առել էական գործընթացներ, որոնք միտված են հանրօգուտ բովանդակության խթանմանը, ինչը վստահաբար կնպաստի նաև որակյալ բովանդակության աճին:

Հանձնաժողովը հարկ է համարում ևս մեկ անգամ բարձրաձայնել 2023 թվականի հունվարի 1–ին ուժի մեջ մտած Օրենքի 6–րդ հոդվածի 4–րդ մասի փոփոխություններով պայմանավորված խնդիրները, որոնց բախվում են հատկապես մարզային հեռուստաընկերությունները: Փոփոխության համաձայն՝ եթեր հեռարձակվող լրատվական և մանկական հաղորդումները և ֆիլմերը պետք է մատչելի լինեն լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար: Հետևաբար, օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում պետք է ներկայացվի հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, իսկ լրատվական հաղորդում և ֆիլմ՝ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազագույն պահանջներին համապատասխան:

Վերոնշյալ փոփոխությունները բարդ կացության մեջ են դրել մարզային հեռուստաընկերություններին, քանի որ պահանջում են լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, իսկ մանկական հաղորդումների դեպքում՝ նաև անհնարին են դարձնում Օրենքի նշված պահանջը չխախտելը՝ հաշվի առնելով մարզերում նման մասնագետների բացակայությունը: Նշված փոփոխության բացասական հետևանքներից է, որ Հեռարձակողները, չցանկանալով խախտել օրենքը, պարզապես իբրև խնդրի լուծում, դադարեցնում են մանկական հաղորդումների հեռարձակումը: Նշված խնդրի առկայությունը հստակ արտացոլված է ստորև ներկայացված թվային վերլուծությամբ:



Գծապատկեր 8. Մուլտֆիլմերի՝ 2023-2024 թվականների համեմատական պատկերը հանրապետական և մայրաքաղաքային սփռման լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրերում

«Էթիկայի կանոնագիրը Հեռարձակողի կողմից միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթն է սեփական էթիկական նորմերի վերաբերյալ» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 28-րդ կետ):

Օրենքի համաձայն՝ բոլոր լիցենզավորված Հեռարձակողները պարտավոր են ունենալ էթիկայի կանոնագիր, որն, ի թիվս այլնի, լիցենզիայի պայման է: Հեռարձակողները պարտավոր են նաև սահմանել իրենց կողմից ընդունված էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, ինչը ենթադրում է, որ Հեռարձակողը պետք է մեխանիզմներ սահմանի էթիկայի կանոնների կիրառումն ապահովելու համար:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում գործող լիցենզավորված Հեռարձակողների մեծամասնությունն ընտրել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնի՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, իսկ մի քանի Հեռարձակող՝ ներքին ինքնակարգավորման տարբերակը:

Հանձնաժողովը ստիպված է կրկնել նախորդ տարեկան հաղորդումների մեջ տեղ գտած տեսակետը, որ հեռարձակողների ինքնակարգավորման մոդելը Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի կայացել, հետևաբար, արդյունավետ չի գործում: Քաղաքացիները, պետական ինստիտուտները, քաղաքական ուժերը, մասնավոր ընկերությունները կրկին հակված չեն դիմելու ինքնակարգավորման մարմիններին: Հեռարձակողների կողմից էթիկայի կանոնագրի խախտումներ թույլ տալու դեպքում հանրության կողմից բողոքի կամ դժգոհության արտահայտման նախընտրելի հարթակները շարունակում են մնալ մամուլը կամ սոցիալական ցանցերը: Բողոքով երբեմն դիմում են Հանձնաժողով, երբեմն անմիջապես դատարան, սակայն ոչ՝ ինքնակարգավորման մարմին:

Էթիկայի նորմերի խախտումների ու դրանց զսպող մեխանիզմների համաչափությունը շարունակում է խնդրահարույց մնալ, քանի որ խախտում կատարած Հեռարձակողները պատրաստ են իրենց եթերում հրապարակել Դիտորդ մարմնի կամ սեփական ինքնակարգավորման մարմնի եզրակացությունը և շարունակել խախտել էթիկայի նորմերը: Այս իրավիճակը հաստատում է նաև այն փաստը, որ Հանձնաժողովի կողմից Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմին ուղղված բողոքների մեծ մասը վերաբերել է միևնույն Հեռարձակողին և կրել է շարունակական բնույթ:

7.3 Ատելության խոսքի դեմ պայքարի անհրաժեշտություն

Էթիկայի հետ առնչվող խնդիրների համատեքստում, թերևս, տեղին է անդրադառնալ վերջերս լայն կիրառություն գտած տերմինի՝ ատելության խոսքին, վերջինիս սահմանման որոշակիացմանը և դրսևորումների տարանջատմանը մեդիայում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2022)16 հանձնարարականի հավելվածով ատելության խոսքի շրջանակը սահմանվում է որպես արտահայտման բոլոր տեսակները, որոնք հրահրում, խթանում, տարածում կամ արդարացնում են բռնություն, ատելություն կամ խտրականություն անձի կամ անձանց խմբի նկատմամբ, կամ որոնք նսեմացնում են նրանց՝ իրենց իրական կամ վերագրվող անձնական հատկանիշների կամ կարգավիճակի պատճառով, ինչպիսիք են՝ ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, ազգությունը, ազգային կամ էթնիկական ծագումը, տարիքը, հաշմանդամությունը, սեռը, գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը:

Նկատի ունենալով, որ ատելության կամ բռնության հրահրման համար քրեական պատասխանատվության միջոցների կիրառումը ցանկացած պարագայում ենթադրելու է կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմանափակում, միջազգային տարբեր ատյանների և դերակատարների կողմից բազմիցս փորձեր են կատարվել սահմանելու այնպիսի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր առանձին դեպքի առնչությամբ որոշելու ատելության խոսքի և կարծիքի արտահայտման ազատության իրավունքով պաշտպանվող իրավաչափ խոսքի սահմանը և կիրառելու համաչափ ու անհրաժեշտ միջոցներ, որոնք չեն հանգեցնի նշված իրավունքի խախտմանը: Ատելության խոսքի ծանրությունը գնահատելու առավել լայն տարածված չափանիշները սահմանված են Ռաբաթի գործողությունների ծրագրով, համաձայն որի՝ միայն խոսքի առավել ծանր դրսևորումները պետք է համարվեն ատելության հրահրում: Ատելության հրահրման ծանրության գնահատման համար կազմվել է 6 մասից բաղկացած թեստ, որը կիրառելի է այն պարագայում, երբ անհրաժեշտ է որոշել՝ արդյոք կոնկրետ խոսքը կարող է համարվել հանցանք, թե՝ ոչ:

Դրանք են՝

1	կոնտեքստը
2	խոսքը տարածողի՝ հասարակությունում ունեցած դիրքը կամ կարգավիճակը
3	դիտավորությունը
4	բովանդակությունը և ձևը
5	խոսքի տարածումը
6	հավանականությունը

Այսպիսով, միգուցե վերը թվարկածից տպավորություն ստեղծվի, որ Հանձնաժողովն ունի բավարար իրավական գործիքակազմ՝ իր կողմից վերահսկվող Հեռարձակողների եթերում ատելության խոսքի դեմ համապարփակ կանխարգելում իրականացնելու համար: Մինչդեռ իրականությունն այս կարևոր հանգամանքի վերաբերյալ հետևյալն է՝ ըստ Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ազգային, ռասայական, սեռային, կրոնական, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն, կամ որոնք պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն»: Սա միակ գործող իրավական կառուցակարգն է, որով Հանձնաժողովն իրավասու է վարչարարություն իրականացնել ատելության խոսույթ պարունակող բովանդակության մասով, սակայն միշտ չէ, որ գործող իրավանորմի շրջանակում հնարավոր է ճշտգրիտ որակել՝ արդյոք եթերում հնչող այս կամ այն խոսքը ատելության դրսևորում է, թե խոսքի ազատություն:

Պետք է փաստենք, որ Հանձնաժողովի մոնիտորինգային ու վերահսկողական գործառույթի համար հիմք հանդիսացող որևէ իրավական ակտով համապարփակ սահմանված չէ վերը թվարկված միջազգայնորեն ընդունված սկզբունքների վրա հիմնված ատելության խոսքի հստակ տարանջատման ու անխոցելի վարչարարություն իրականացնելու համար հիմք հանդիսացող իրավանորմ: Հարկ է նշել նաև, որ երբ հնչեցված խոսքը դասակարգվում է որպես խտրականության դրսևորում, այստեղ ևս, ըստ Հանձնաժողովի, Օրենքը թերի է, քանի որ նախատեսում է նման արարքի համար անհամաչափ մեղմ պատիժ՝ գրավոր նախազգուշացում:

Ծայրահեղ դրսևորումների դեպքում ատելության խոսքի կանխարգելման՝ Հանձնաժողովին հասանելի միակ գործիքակազմն առկա իրավակարգավորումների պայմաններում այդ բովանդակության հասցեագրումն է քրեական վարույթներ նախաձեռնելու իրավասություն ունեցող պետական մարմիններին: Սակայն այս դեպքում ևս անպատիժ մնալու ռիսկերը մեծ են, քանի որ համապատասխան մարմինների կողմից շատ հաճախ դրանք որակվում են որպես քրեաիրավական պատասխանատվության շեմը չհատող խոսույթներ:

---

[3] *2012 թվականի հոկտեմբերի 5-ին Ռաբաթի գործողությունների ծրագրի ընդունումը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի նախաձեռնած միջոցառումների գագաթնակետն էր՝ «ազգային և տարածաշրջանային մակարդակներում խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում պարունակող ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչության մասին օրենսդրության, իրավագիտության և քաղաքականության իրականացման համապարփակ գնահատում կատարելու առումով՝ միաժամանակ խրախուսելով արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ լիարժեք հարգանքը, ինչպես նախատեսված է մարդու իրավունքների միջազգային իրավունքով»:*

8 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Թեմատիկ ուղղվածությունը տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն է ըստ բովանդակային առանձնահատկությունների» («Տեսալսողական մեդիայի մասին օրենք», 3-րդ հոդված, 1-ին մաս, 7-րդ կետ):

Հանձնաժողովն, երաշխավորելով տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների խմբագրական անկախությունը, միաժամանակ կարևորում է վերջիններիս կողմից հեռարձակվող տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը, տեսալսողական հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը:

Ստորև փաստացի տվյալների հիման վրա ներկայացնում ենք Հանձնաժողովի կողմից կատարված վերլուծության արդյունքները, որոնք վերաբերում են տեսալսողական մեդիածառայություն մատուցող լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրերին:

Գծապատկեր 9. Հանրապետական և մայրաքաղաքային սփռման տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը



Գծապատկեր 10. Հանրապետական և մայրաքաղաքային սփոման տեսալսողական ծրագրերի հանրօգուտ հաղորդումներ



Գծապատկեր 11. Հանրապետական և մայրաքաղաքային սփոման տեսալսողական ծրագրերի՝ 2020-2024 թվականների եթերում հայերեն հաղորդումների համեմատական պատկերը



2020թ. օգոստոս ամսից գործում է համաձայն նոր օրենքի պահանջների

Գծապատկեր 12. Հանրապետական և մայրաքաղաքային սփռման տեսալսողական ծրագրերի սեփական հաղորդումների 2021-2024 թվականների համեմատական պատկերը



Գծապատկեր 13. Մարզային սփռման տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածք



Գծապատկեր 14. Մարզային սփռման տեսալսողական ծրագրերի հանրօգուտ հաղորդումները



Գծապատկեր 15. Մարզային սփռման տեսալսողական ծրագրերի եթերում հայերեն հաղորդումների՝ 2021-2024 թվականների համեմատականի պատկերը



Գծապատկեր 16. Մարզային սփռման տեսալսողական ծրագրերի սեփական հաղորդումների՝ 2021-2024 թվականների համեմատական պատկերը



Գծապատկեր 17. Լսողական մեդիածառայություն մատուցողների լսողական ծրագրերի եթերի կառուցվածքը. հանրապետական և մայրաքաղաքային ծածկույթ

Գծապատկեր 18. Լսողական մեդիածառայություն մատուցողների լսողական ծրագրերի եթերի կառուցվածքը. մարզային ծածկույթ

76% ԵՐԱԺՇՏԱԿԱՆ	6% ԱՅԼ ԹԵՄԱՆԵՐ	5% ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ	5% ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
4% ԿՈՄԵՐՑԻՈՆ	2% ԼՐԱՏՎԱԿԱՆ	1% ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ	1% ԺԱՄԱՆՑԱՅԻՆ

9 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հանձնաժողովն, իրականացնելով Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորությունները, 2024 թվականին «Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված վարչարարության իրականացման արդյունքում հարուցել է 45 վարչական վարույթ. 42-ը՝ սեփական նախաձեռնությամբ, 3-ը՝ վարչական բողոքների հիման վրա: Հավելենք, որ վարչական 2 վարույթի որոշումները կայացվել են 2025 թվականի հունվարին:

Գծապատկեր 19. Կարգավորող մարմնի վերահսկողության ոլորտում գործող և վարչարարություն իրականացված ընկերություններ



Կարգավորող պետական մարմինը տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերելու արդյունքում՝

Սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների պարագայում՝

- 1 վարչական վարույթի արդյունքում կիրառել է գրավոր նախազգուշացում,
- 30 վարչական վարույթի արդյունքում կիրառել է տուգանք,
- 3 վարչական վարույթի արդյունքում կիրառել է լիցենզիայի գործողության կասեցում[4]՝,
- 1 վարչական վարույթի արդյունքում կիրառել է լիցենզիայի գործողության դադարեցում[5]
- 8 վարչական վարույթի արդյունքում վարչական վարույթը կարճվել է[6]:

Վարչական բողոքների պարագայում՝

- 3 վարչական վարույթի արդյունքում կիրառել է տուգանք,



Գծապատկեր 20. Վարչական վարույթի կիրառում

---

[4]Ցանցային երկու օպերատորի լիցենզիայի գործողությունը կասեցվել է 30 օր ժամկետով՝ լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում տեսալսողական հաղորդումներ չհեռարձակելու հիմքով:

Ցանցային մեկ օպերատորի լիցենզայի գործողությունը կասեցվել է 10 օր ժամկետով՝ առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ տեսալսողական հաղորդումների չհեռարձակելու հիմքով:

[5]«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊ ընկերության կողմից լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ավարտին չի վերացվել մատնանշված իրավախախտումը, որը հիմք է հանդիսացել ցանցային օպերատորի լիցենզիայի գործողության դադարեցման:

[6]2024 թվականին «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱՍԼԻՔ» ՍՊԸ–ի նկատմամբ Հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 23-ի 55-Ա որոշմամբ վարչական վարույթը կասեցվել է, մինչև ՀՀ քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախաձեռնված քրեական վարույթի նախաձեռնելը կամ մերժելը: Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 06-ի 64-Ա որոշմամբ վարչական վարույթը կարճվել է, քանի որ համապատասխան մարմինների կողմից չի հայտնաբերվել և փաստվել այնպիսի դեպք կամ գործողություն, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

Վարչական վարույթների հարուցման հիմք են հանդիսացել հետևյալ իրավախախտումները՝

1. Ոչ սեփական տեսալսողական հաղորդումների հեռարձակում առանց դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության:
2. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորի կողմից կարգավորող պետական մարմնին չտեղեկացում:
3. Գովազդը կարգավորող օրենսդրության դրույթների խախտում:
4. Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկության չներկայացում:
5. Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման բացակայություն:
6. Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակման արգելքի պահանջի խախտում:
7. Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների, ֆիլմերի հեռարձակում՝ առանց հայերեն ընկալման որևէ միջոցով (կրկնօրինակմամբ, հնչյունավորմամբ և (կամ) ենթագրով) ուղեկցման:
8. Դիստրիբյուտորի կողմից առանց Օրենքով սահմանված ծանուցման գործունեության իրականացում:
9. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների՝ Օրենքով արգելված ժամին հեռարձակում:
10. Տեսալսողական հաղորդումների հեռարձակում, որոնք հետապնդում են ազգային, ռասայական, սեռային և կրոնական հատկանիշներով խտրականություն քարոզելու նպատակ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:
11. Կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման կարգի խախտում:
12. Լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում տեսալսողական հաղորդումների հեռարձակման չապահովում:
13. Առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ տեսալսողական հաղորդումների հեռարձակման չապահովում:

2024 թվականին հարուցված վարչական վարույթների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ***Հավելված 3-ում:***

Գծապատկեր 21. Հարուցված վարչական վարույթների 2011-2024 թվականների համեմատական պատկերը



Նախորդ տարվա համեմատ, հարուցված վարչական վարույթների քանակը 19-ով կրճատվել է: Նվազումը պայմանավորված է Հանձնաժողովի վերահսկողական գործառույթների ներքո գործող սուբյեկտների կողմից տարեցտարի առավել օրինապահ վարքագծի դրսևորմամբ, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության խախտման անխուսափելի իրավական հետևանքների գիտակցմամբ:

Ասվածի համատեքստում թվերը պարզապես խոսուն են:

Գծապատկեր 22. Կարգավորող մարմնի վերահսկողության ոլորտում գործող և վարչարարություն իրականացված ընկերություններ. 2023-2024 թվականների համեմատական պատկերը



Հանձնաժողովը ցանկանում է ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ էապես նվազել է ցանցային օպերատորների կողմից առանց վերահաղորդման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության տեսալսողական ծրագրերի վերահաղորդումը:



Գծապատկեր 23.
Առանց համապատասխան իրավական հիմքերի վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի 2023-2024 թվականների համեմատական պատկերը

Ներկայացված թվերը փաստում են, որ 2023 թվականի համեմատ, առանց համապատասխան իրավական հիմքերի վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ընդհանուր քանակը 2024 թվականին կրճատվել է ավելի քան 4 անգամ:

Հանձնաժողովը ցանկանում է ներկայացնել 2023-2024 թվականներին հիշյալ համատեքստում իրավախախտում կատարած ցանցային օպերատորների առաջին հնգյակը՝ հաշվի առնելով առանց համապատասխան իրավական հիմքերի վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի քանակը.

2023 թվական	Քանակ
«ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» ՍՊԸ	147
«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	146
«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	103
«ՋԻ ԷՆ ՍԻՍԻԹԵՄՍ» ՍՊԸ	86
«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	44

2024 թվական	Քանակ
«ԱՅ ՆԵԹ» ՍՊԸ	92
«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	33
«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	21
«ՄԱՅՆԵՏ» ՍՊԸ	18
«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	
«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	13

Թեև ներկայացված տվյալները փաստում են, որ ցանցային օպերատորների կողմից առանց համապատասխան հավաստող փաստաթղթերի առկայության տեսալսողական ծրագրերի վերահաղորդման դեպքերն էապես նվազել են, սակայն նրանց գործունեության նկատմամբ վերահսկողության առկա գործիքակազմն, ըստ էության, անբավարար է, ինչին Հանձնաժողովն արդեն անդրադարձել է այս տարեկան հաղորդման ընթացքում[7]:

[7] *Տես Վարչական փույժերի անհամաչափություն հատվածում:*

Գծապատկեր 24. Հարուցված վարչական վարույթների և կիրառված որոշումների 2011-2024 թվականների համեմատական պատկերը



Իրականացված վարչական վարույթների արդյունքում 2024 թվականին իրավախախտումների համար նախատեսված գանձապետական հաշվեհամարին է փոխանցվել 5 928 491.00 ՀՀ դրամ, որից 3 378 491.00 ՀՀ դրամը կազմում են 2024 թվականին կիրառված և վճարած տույժերը:

10 ԴԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ

2024 թվականին Հանձնաժողովը դատական պաշտպանության աշխատանքներ է իրականացրել վարչական դատարաններում քննվող վարչական գործերով, ներկայացրել այդ գործերով հայցադիմումների պատասխաններ, վերաքննիչ բողոքներ, վերաքննիչ բողոքների պատասխաններ, միջնորդություններ և առարկություններ՝ ապահովելով նաև դատարաններում սույն գործերով դատական նիստերին մասնակցությունը:

Գծապատկեր 25. Հանձնաժողովի որոշումների դատական կարգով բողոքարկման 2011-2024 թվականների տվյալները



2024 թվականին տեսալսողական մեդիածառայություն մատուցող, ցանցային օպերատոր և դիստրիբյուտոր հանդիսացող ընկերությունների կողմից ներկայացված հայցերով դատարաններում քննվել է 27 վարչական գործ. 7 գործով հայցադիմումները ներկայացվել են 2024 թվականի ընթացքում, իսկ 20 գործ փոխանցվել է նախորդ տարիներից.

այդ թվում՝

- «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ-ի ներկայացրած հայցերով՝ 10 վարչական գործ (նախորդ տարվա ընթացքում՝ **12**),
- «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ-ի հայցերով՝ **2** վարչական գործ (նախորդ տարվա ընթացքում՝ **4**),
- «ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցերով՝ 2 վարչական գործ,
- «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի հայցերով՝ **2** վարչական գործ,
- «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ-ի հայցերով՝ **2** վարչական գործ,
- «ԱՄԵԴԻԱ», «ՇԱՐԿ», «ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ», «ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ», «ՌԱԴԻՈ ՎԱՆ», «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ», «ՄԱՅ ՆԵՏ», «168 ԺԱՄ» և «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայցերով՝ **1-ական** վարչական գործ (ընդհանուր՝ 9):

*Հանձնաժողովի որոշումների դեմ ներկայացված հայցերով 2024 թվականին դատարան է ներկայացվել **7** հայցադիմումի պատասխան (առարկություններ), **3** վերաքննիչ բողոքի պատասխան, **3** վերաքննիչ բողոք և **1** վճռաբեկ բողոք՝ ապահովելով նաև դատարաններում քննվող սույն և նախորդ տարիներից փոխանցված գործերով դատական նիստերին մասնակցությունը:*

2024 թվականին ՀՀ դատարաններում քննվել է՝

1. Հանձնաժողովի կողմից վարչական տույժի ենթարկելու որոշումների դեմ բերված բողոքներով 14 վարչական գործ՝ *«ԱՄԵԴԻԱ», «ՇԱՐԿ», «ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ», «ՌԱԴԻՈ ՎԱՆ», «ՄԱՅ ՆԵՏ», «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ», «168 ԺԱՄ», «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերություններ՝* ***1-ական****, «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ, «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ և «ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊ ընկերություն՝* ***2-ական****:*

2. Սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների որոշումների դեմ 8 վարչական գործ*. 7-ը՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ-ի, 1-ը՝ «ՀՈՌԻՓ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցով:*

3. Իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջով 3 վարչական գործ*. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցերով Հանձնաժողովի՝ 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 104-Ա, 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 86-Ա և 2022 թվականի հունիսի 13-ի թիվ 85-Ա որոշումները պատասխանողին անստորագիր ներկայացնելու վերաբերյալ:*

4. Վարչական 1 գործ՝ *«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության կողմից* ներկայացրած հայցով՝ տեսալսողական ծրագրերի ծանուցումը չհաստատելու վերաբերյալ Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի 19-Ա և 2024 թվականի մարտի 22-ի թիվ 22-Ա որոշումները վերացնելու պահանջով:

5. ***Վարչական 1 գործ՝*** «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայցով՝ Հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 85-Ա՝ «ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ-ի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և «ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊ ընկերությանը վարչական պատասխանատվության ենթարկելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

2024 թվականի ընթացքում դատարան են բողոքարկվել Հանձնաժողովի կողմից վարչական տույժի ենթարկելու **6** և Հանձնաժողով ներկայացված տեսալսողական ծրագրերի ծանուցումը չհաստատելու վերաբերյալ **1** որոշումներ ***(Մանրամասները՝ Հավելված 4-ում):***

2024 թվականին դատարաններում ավարտվել է (ըստ էության լուծվել) **9** վարչական գործ. 8-ի դեպքում վերջնական դատական ակտերը կայացվել են Հանձնաժողովի օգտին և **1** վարչական գործով վերջնական դատական ակտը կայացվել է ոչ Հանձնաժողովի օգտին ***(Մանրամասները՝ Հավելված 5-ում):***

2024 թվականի ընթացքում 11 վարչական գործով ՀՀ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում Հանձնաժողովի օգտին կայացվել են վճիռներ և ընդունվել որոշումներ: **6** գործով Հանձնաժողովի դեմ ներկայացված հայցերը մերժվել են, **1-ով՝** ՀՀ վարչական դատարանը որոշում է կայացրել գործի վարույթը կարճելու մասին և **5** գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում է կայացրել ***(Մանրամասները՝ Հավելված 6-ում):***

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հանձնաժողովի որոշումների դեմ հայցերով ՀՀ վարչական և վերաքննիչ վարչական դատարանների վարույթում քննվել է **17** վարչական գործ.

- *«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցերով՝ **2** վարչական գործ,*
- *«ՀՈՒՄԱԲԵՐ» ՓԲԸ-ի հայցերով՝ **2** վարչական գործ,*
- *«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի հայցերով՝ **2** վարչական գործ,*
- *«ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ-ի հայցերով՝ **2** վարչական գործ,*
- *«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ», «ԱՄԵԴԻԱ», «ՇԱՐԿ», «ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ», «ՌԱԴԻՈ ՎԱՆ», «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ», «ՄԱՅ ՆԵՏ», «168 ԺԱՄ» և «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայցերով **1**-ական վարչական գործ:*

Համեմատություն կատարելով նախորդ տարվա տվյալների հետ՝ արձանագրենք, որ 2023 թվականին ՀՀ վարչական դատարան է բողոքարկվել Հանձնաժողովի կողմից կայացված **8** որոշում, 2024 թվականին՝ **7**:

2023 թվականին ՀՀ դատարաններում ավարտվել է՝ ըստ էության Հանձնաժողովի օգտին լուծվել է Հանձնաժողովի դեմ ներկայացված հայցերով՝ **5** գործ, 2024 թվականի ընթացքում՝ **9** գործ:

ՀՀ դատարաններում 2023 թվականին Հանձնաժողովի օգտին **6** վարչական գործով կայացվել են վճիռներ և ընդունվել որոշումներ, 2024 թվականին՝ **11** գործով:

Հանձնաժողովի կողմից վերը նշված դատավարական գործողություններն իրականացվել են՝ պահպանելով դատավարական և նյութական իրավունքի նորմերի դրույթները, որոնք էական նշանակություն են ունեցել գործերի ընթացքի և ճիշտ լուծման համար:

11 ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները 2024 թվականին պետական տուրքի գծով ՀՀ պետական բյուջե մուտքագրված 34 349 768 ՀՀ դրամ գումարն ապահովել են տեսալսողական և լսողական ծրագրերի հեռարձակման, ցանցային օպերատորների գործունեության տարեկան պետական տուրքերի, լիցենզիաների վերաձևակերպման, կրկնօրինակի տրամադրման, ինչպես նաև սահմանված ժամկետում չվճարված տարեկան պետական տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի համար գանձված գումարների հաշվին:

Համեմատության կարգով նշենք, որ Հանձնաժողովի կողմից գանձվող պետական տուրքը 2022 թվականին կազմել է 43 102 559 ՀՀ դրամ, 2023 թվականին՝ 32 927 173 ՀՀ դրամ: 2022 թվականի պետական տուրքի մուտքերի բարձր ցուցանիշը 2023 և 2024 թվականներին գանձված փաստացի մուտքերի նկատմամբ պայմանավորված է Հանձնաժողովի կողմից 2022 թվականին հայտարարված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման, ինչպես նաև լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մի շարք մրցույթների անցկացմամբ:

12 ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2024 թվականը Հանձնաժողովի համար, ստեղծման պահից ի վեր, միջազգային համագործակցության առումով ամենածանրաբեռնված և արդունավետ տարին էր:

Տարվա ընթացքում Հանձնաժողովը շարունակել է երկկողմանի և բազմակողմանի ձևաչափերով համագործակցել մի շարք երկրների մեդիակարգավորող մարմինների, միջազգային կազմակերպությունների և հարթակների հետ՝ ուսումնասիրելով կարգավորման եղանակների առաջատար փորձը, օրենսդրության կիրառման մեխանիզմները, համացանցի տեսալսողական բովանդակության կարգավորման եղանակները, արհեստական բանականության գործիքակազմի օգտագործումը տեսալսողական բովանդակության ստեղծման գործում և այլն:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովը հանդիսանում է Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների կարգավորող մարմինների ֆորումի (BRAF), Միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակի (MNRA), Մեդիա կարգավորող մարմինների ֆրանկոֆոն հարթակի (REFRAM) և Լոնդոնի միջազգային ինստիտուտի (IIC) լիիրավ անդամ: Ինչպես նաև կնքված երկկողմանի հուշագրերի և պայմանագրերի հիման վրա փոխգործակցում է ութ երկրի (Իտալիա, Չեխիա, Մոլդովա, Լիտվա, Վրաստան, Ուկրաինա, Ռուսաստան, Արգենտինա) կարգավորող մարմինների հետ:

2024 թվականին Հանձնաժողովը մասնակցել է EPRA-ի գարնանային և աշնանային նստաշրջաններին՝ Ռոտերդամ (Նիդերլանդների Թագավորություն) և Լիմասոլ (Կիպրոս) քաղաքներում, որոնց ժամանակ քննարկվել են «Մեդիագրագիտություն և ընտրություններ», «Արհեստական բանականություն և մեդիայի կարգավորում», «Ատելության խոսք պարունակող բովանդակության դեմ պայքար» և «Արհեստական բանականության ազդեցությունը մեդիայի վրա» թեմաները:

Կարգավորող մարմնի երեք ներկայացուցիչ մասնակցել են դեռևս 2023 թվականի նոյեմբերից մեկնարկած «Մեդիայի զարգացումը և դեմոկրատական մեդիա կարգավորումը նոր թվային դարաշրջանում» միջազգային վերապատրաստման ծրագրին (ֆինասավորվում է Շվեդական միջազգային զարգացման համագործակցություն գործակալության (SIDA) կողմից):

Շվեդիայում և Դանիայում տեղի ունեցած վերապատրաստման ծրագրի ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են մեդիագրագիտության, փաստերի ստուգման (fact-checking) խնդիրներին առնչվող դասընթացների, բազմաթիվ հանդիպումներ են ունեցել մեդիածառայություններ մատուցող ընկերություններում: Միաժամանակ ներկայացրել են ազգային մեդիադաշտի կարգավորման և ինքնակարգավորման առկա վիճակը, լրագրողական էթիկայի, ցանցային օպերատորների աշխատանքի կարգավորմանը վերաբերող խնդիրները:

2024 թվականի հունիսին Հանձնաժողովի ներկայացուցիչը գործուղվել է Խորվաթիա՝ Դուբրովնիկ քաղաք, և մասնակցել ՅՈՒՆԵՍԿՈ-ի հովանու ներքո կազմակերպված թվային պլատֆորմների կառավարմանը նվիրված միջազգային կոնֆերանսին:

2024 թվականի հունիսին Հանձնաժողովի երկու անդամներ Վրաստանում մասնակցել են Եվրոպական աուդիովիզուալ օբսերվատորիայի փակ աշխատաժողովին: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են փոքր երկրների տեսալսողական շուկայի մրցունակությունը, կարգավորող մարմինների դերը, կարգավորումների ստանդարտացումը ոչ եվրոպական երկրներում թեմաները: Ներկայացվել է աուդիովիզուալ շուկայի վերջին միտումները՝ կինոթատրոնների, հեռուստատեսության, սթրիմինգային և համացանցային հարթակների փոխազդեցության, մրցակցության ու համագործակցության օրինակներով, անդրադարձ է կատարվել ԵՄ անդամ չհանդիսացող երկրներում ստանդարտների և կանոնների ներդրման պահանջին: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Օբսերվատորիայի աշխատանքներին հայկական կողմի առավել ակտիվ մասնակցության՝ ոչ միայն կինոարտադրության առաջխաղացման, այլև կարգավորման ու ինքնակարգավորման ոլորտում:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը 2023 թվականին ընտրվել էր Միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակի (MNRA) փոխնախագահող կառույց, իսկ Հայաստանը՝ հարթակի հերթական տարեկան համաժողովի անցկացման վայր: Միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակը միավորում է կարգավորող անկախ մարմինների՝ 24 երկրից: Այն համագործակցության ցանց է՝ բաց քննարկումների, տեսալսողական բովանդակության կարգավորման լավագույն փորձի փոխանակման, համատեղ հետազոտությունների և մարտահրավերներին ժամանակին արձագանքելու:

2024 թվականի հոկտեմբերի 8–9–ը Երևանում տեղի ունեցավ Միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակի (Mediterranean Network of Regulatory Authorities) 23–րդ տարեկան համաժողովը, որին մասնակցեց հարթակի անդամ 19 պետությունների (այդ թվում՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի, Ալբանիայի, Մարոկկոյի, Հունաստանի, Կիպրոսի) կարգավորող մարմինների ղեկավարներ, ՅՈՒՆԵՍԿՈ-ի, EPRA-ի ներկայացուցիչներ:

Համաժողովի առանցքային թեմաներն էին՝ արհեստական բանականության կիրառումը, տեսալսողական հարթակների կարգավորման սկզբունքները, ռադիոհեռարձակման թվայնացման ներկան ու ապագան: Մասնակիցները ծանոթացան ՅՈՒՆԵՍԿՈ-ի թվային հարթակների կառավարման սկզբունքների նոր ուղեցույցի բովանդակությանը:

Համաժողովի ավարտին հարթակի նախագահությունը ստանձնեց Հայաստանը՝ ի դեմս Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի: Իր ելույթում Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանը նշեց, որ նախագահող կառույցի ուշադրության կենտրոնում լինելու է ապատեղեկատվությանն ու ատելության խոսքին դիմակայելու համատեղ ծրագրերի մշակումը:

Բանգկոկում (Թաիլանդի Թագավորություն) նոյեմբերի 3-7-ը տեղի ունեցավ Լոնդոնի միջազգային ինստիտուտի (IIC) միջազգային կարգավորողների տարեկան ֆորումը և Փոքր ազգերի կարգավորող մարմինների հերթական (SNRF) համաժողովը, որին աշխարհի 34 երկրի ներկայացուցիչների հետ մասնակցեց նաև Հանձնաժողովի պատվիրակությունը:

Համաժողովի ընթացքում կարևորվեց օնլայն հարթակների կարգավորման հիմնական խնդիրներից՝ ինքնակարգավորումը: Համաժողովի ընթացքում Հանձնաժողովի պատվիրակությունը երկկողմ հանդիպումներ ունեցավ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Ջիբրալթարի, Մարոկկոյի և Իտալիայի կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ, քննարկեց մի շարք հարցեր:

Հանձնաժողովի անդամներն ու աշխատակիցները հեռավար մասնակցել են բազմաթիվ կոնֆերանսների, դասընթացների, քննարկումների:

2024 թվականի ընթացքում Երևանում, Մոսկվայում, ինչպես նաև առցանց, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահը հանդիպումներ և քննարկումներ է ունեցել Ռուսաստանի Դաշնության կարգավորող մարմինների և հեռուստառադիոընկերությունների (այդ թվում՝ Թվային զարգացման և զանգվածային հաղորդակցության նախարարության, «Ռոսկոմնադզոր» դաշնային ծառայության, «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության, «Ռադիո Սպուտնիկ» ռադիոընկերության) ղեկավար կազմի հետ:

Քննարկումների առանցքը Հայաստանի տարածքում ՌԴ հեռարձակողների ծրագրերի տարածման հետ առնչվող խնդիրներն են եղել:

Կարգավորող մարմինն արձանագրում է, որ իր սկզբունքային դիրքորոշումը, վերահսկողական գործառույթների արհեստավարժ կատարումը, ՌԴ գործընկերների հետ պարբերական քննարկումների կազմակերպումը նշանակալի դեր խաղաց, որպեսզի 2024 թվականին՝ 2022-2023 թվականների համեմատ, կտրուկ նվազի Հայաստանում հեռարձակվող ՌԴ հեռուստածրագրերում մեր պետության, ժողովրդի, ազգային արժեքների նկատմամբ վիրավորական և ներքաղաքական կյանքին միջամտելու բովանդակությամբ հաղորդումների քանակը:

2024 թվականին Հանձնաժողովում հանդիպումներ են կայացել Վենետիկի հանձնաժողովի պատվիրակության անդամների, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության պատվիրակության ներկայացուցիչների, ՀՀ-ում հավատարմագրված մի շարք դիվանագիտական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Քննարկվել են բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ մեդիաոլորտը կարգավորող օրենսդրության արդիականացումը, համացանցի կարգավորման բացակայության պարագայում ատելության խոսքի և ապատեղեկատվության ծավալների ավելացումը, Հանձնաժողովի և հեռարձակողների կարիքների գնահատումը:

13 ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

2024 թվականին Հանձնաժողովն ընդունել է 105 որոշում՝ 102 անհատական, 1 ներքին, 2 նորմատիվ: Մասնավորապես՝

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 1-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա և «Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 110-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 75-Ա որոշումը:

2. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 28-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 73–Ն որոշումը:

3. «Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերի ու տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 74-Ն որոշումը:

Գծապատկեր 26. 2019-2024 թվականներին Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համեմատական պատկերը



14 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

2024 թվականին Հանձնաժողով մուտքագրվել է 1134 գրություն, որից 61-ը քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված դիմում-բողոք է (հեղինակային իրավունքի խախտումների, տեսալսողական մեդիածառայությունների բնագավառը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու, տեսալսողական ծրագրերի վերահաղորդումները դադարեցնելու, վարչական վարույթ հարուցելու մասին և այլն), որոնց տրվել է պատշաճ պատասխան: 2024 թվականին Հանձնաժողովից ելքագրվել է 850 գրություն:

Գծապատկեր 27. 2019-2024 թվականներին Հանձնաժողով մուտքագրված գրությունների և դիմում-բողոքների համեմատական պատկերը



15 ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Ազգային ժողովի՝ 2024 թվականի հոկտեմբերի 23-ի ԱԺՈ-92-Ա որոշմամբ Ավետ Պողոսյանն ընտրվել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ:

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար կազմակերպվել և անցկացվել է 2 մրցույթ, որոնց նախորդել են նախապատրաստական աշխատանքներ:

Կարգավորող մարմնի 22 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է՝ մասնակցելով ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Փաստաթղթերի նախապատրաստում», «Ծառայությունների մատուցում», «Հասարակայնության հետ կապերի ապահովում», «Հաշվետվությունների մշակում», «Մարդկային ռեսուրսների կառավարում», «Աշխատանքային օրենսդրություն», «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ», «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն», «Փաստաթղթաշրջանառություն (գործավարություն, արխիվային գործ)», «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում», «Իրավական ակտերի նախապատրաստումը և դրանց կիրառման առանձնահատկությունները», «Պաշտոնական փաստաթղթերի լեզուն», «SMM դասընթաց», «Աշխատանքի վարձատրության խնդիրները պետական ոլորտում» թեմաներով հեռավար և առկա դասընթացներին:

3 աշխատակից վերապատրաստվել է՝ մասնակցելով Շվեդիայի ՆԻՐԱՍ (NIRAS) ընկերության կողմից կազմակերպված «Մեդիայի զարգացումը և դեմոկրատական մեդիա կարգավորումը նոր թվային դարաշրջանում» թեմայով միջազգային վերապատրաստման ծրագրին:

2 աշխատակից վերապատրաստվել է՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «2025 թվականի ծրագրային բյուջետավորում» թեմայով դասընթացին:

Հաշվապահական հաշվառման և ֆինանսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահը մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից անցկացվող գնումների համակարգողների 2024 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին:

16 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Հանձնաժողովի ծախսը՝ 0.4 մլրդ դրամ, կատարողականը՝ 98.8 %:

Աղյուսակ 7. 2024 թվականին Հանձնաժողովի իրականացրած ծրագրերը (մլն դրամ)

Ծրագրեր	2023 թ. փաստ.	2024 թ. ճշտված պլան	2024 թ. փաստ.	Կատարող-ական ճշտված պլանի նկատմամբ (%)	2024 թ. 2023 թ.-ի նկատմամբ (%)	2024 թ. և 2023 թ. տարբե-րությունը
Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորում	**368.0**	**382.4**	**377.9**	**98.8**	**102.7**	**9.9**

2024 թվականին Հանձնաժողովի ծախսերը կազմել են 377.9 մլն դրամ՝ ապահովելով 98.8 % կատարողական: Միջոցները հիմնականում ուղղվել են կարգավորող մարմնի գործունեության ապահովմանը՝ տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորման ծառայությունների միջոցառմանը, որի ծախսերը կազմել են 366.5 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.1 %-ը՝ հիմնականում պայմանավորված էներգետիկ և կապի ծառայությունների տնտեսումներով:

Հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերը կատարվել են 85.5 %-ով՝ կազմելով 5.9 մլն դրամ, որը պայմանավորված է մրցույթի արդյունքում սարքավորումների և գրասենյակային գույքի՝ նախատեսվածից ցածր արժեքով ձեռքբերմամբ:

2023 թվականի համեմատ Հանձնաժողովի ծախսերն աճել են 2.7 %-ով (9.9 մլն դրամով), ինչը հիմնականում պայմանավորված է «Միջերկրածովյան երկրների կարգավորող մարմինների պլատֆորմի (MNRA)» 23-րդ տարեկան համաժողովի՝ Հայաստանի Հանրապետությունում անցկացման նպատակով «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ» միջոցառման շրջանակներում 5.4 մլն դրամի հատկացմամբ, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի և անդամների պաշտոնական դրույքաչափերի հաշվարկման գործակիցների բարձրացմամբ:

Հավելված 1
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2024 թվականի հաղորդման

ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՍԵՐԻԱՆ, ՀԱՄԱՐԸ ԵՎ ՏՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«ԳԵՂԱՄԱ» «ՍԵՎԱՆՏԻՎԻ1» («ԷՍՏԻՎԻ1»)	21.08.2020թ.
2	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	«ՖՈՐՏՈՒՆԱ»	21.08.2020թ.
3	«ՑԱՅԳ» ՍՊԸ	«ՑԱՅԳ»	21.08.2020թ.
4	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	«ԿԵՆՏՐՈՆ»	21.08.2020թ.
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	«ԼՈՌԻ»	21.08.2020թ.
6	«ՇԱՐԿ» ՍՊԸ	«5-ՐԴ ԱԼԻՔ» «5 ՊԼՅՈՒՍ» «5-ՐԴ ՌԱԴԻՈԱԼԻՔ»	21.08.2020թ.
7	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ»	21.08.2020թ.
8	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ»	28.08.2020թ.
9	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3»	28.08.2020թ.
10	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	«ԵՐԵՎԱՆ ԷՖԷՄ»	28.08.2020թ.
11	«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	«:ԲՈՒՆ ԹԻՎԻ»	28.08.2020թ.
12	«ՕԴԱԿ» ՍՊԸ	«ՍՈՆԳ ԹԻՎԻ» «ԹՐԱՎԵԼԻՆԳ ԹԻՎԻ»	28.08.2020թ.
13	«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ	«Ա1+»	28.08.2020թ.
14	«ՇԱՆԹ» ՍՊԸ	«ՇԱՆԹ» «ՇԱՆԹ ՊՐԵՄԻՈՒՄ» «ՇԱՆԹ ՄՅՈՒԶԻՔ» «ՇԱՆԹ ՆՅՈՒԶ» «ՇԱՆԹ ՍԵՐԻԱԼ» «ՇԱՆԹ ՔԻԴՍ» «ՇԱՆԹ ՍՊՈՐՏ» «ՇԱՆԹ ՔՈՄԵԴԻ» «ՇԱՆԹ ԳՅՈՒՄՐԻ» «ՇԱՆԹ ՖԻԼՄ» «ՇԱՆԹ ՔՈՒՔԻՆԳ»	04.09.2020թ.

15	«ՄԵԴԻԱ ՆՅՈՒՔ» ՍՊԸ	«ԱՐԱՐԱՏՆՅՈՒՔ ԹԻՎԻ»	04.09.2020թ.
16	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	«ԱՐՄԵՆԻԱ» «ԱՐՄԵՆԻԱ ՊՐԵՄԻՈՒՄ» «ՔՈՄԵԴԻ» «ՀԱՅԿԻՆՈ» «ՋԱՆ ԹԻՎԻ» «ՍԵՐԻԱԼ»	08.09.2020թ.
17	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	«ՄԻԳ ԹԻՎԻ» «ՄԻԳ ՌԱԴԻՈ»	08.09.2020թ.
18	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ա-ԹԻՎԻ»	08.09.2020թ.
19	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	«ԿԻՆՈՄԱՆ» «ԼԱՅՖ ՀԱՔ» «ՀԱՅ ԹԻՎԻ» «ԹԱՎԱ ԹԻՎԻ» «ԽԱՂԱԼԻՔ» «ԷՅԲԻԷՆ ԱՐՄԵՆԻԱՆ ԲԻԶՆԵՍ ՆՅՈՒՔ» («ABN ARMENIAN BUSINESS NEWS») «ԲԱԶՄՈՑ ԹԻՎԻ» «ՖԻԹՆԵՍ ԹԻՎԻ» «ՄՈՒԶԶՈՆ»	18.09.2020թ.
20	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ»	18.09.2020թ.
21	«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ	«ՀԻԲՐԻԴ ՌԵՍՏ» «ՀԻԲՐԻԴ ՖԻԼՄ» «ՀԻԲՐԻԴ ՍՊՈՐՏ» «ՀԻԲՐԻԴ ԷԴՈՒՔԵՅՇԸՆ»	18.09.2020թ.
22	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	«ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ»	18.09.2020թ.
23	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»	, 18.09.2020թ.
24	«ՖՐԻ ՆՅՈՒՔ» ՍՊԸ	«ՖՐԻ ՆՅՈՒՔ»	18.09.2020թ.
25	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՏԱՎՈՒՇ ԹԻՎԻ» «ՏԱՎՈՒՇ ԷՖԷՄ»	28.09.2020թ.
26	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» «ԴԵԼՏԱ ԹՐԵՎԼ» «ԴԵԼՏԱ ՄՅՈՒԶԻՔ»	19.10.2020թ.
27	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«21 ԹԻՎԻ»	19.10.2020թ.
28	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	«ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ»	19.10.2020թ.
29	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	«ԱՐՄԱ ԹԻՎԻ»	02.11.2020թ.

30	«ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՆՈՒՌ» «ՎԵԼԱՐԻ» «ՍԱՆ ԹԻՎԻ» «ԱՅ ԹԻ ՍԻ» «ԱՐՄԹՈՒՆ ԹԻՎԻ» «ՎԻ»	02.11.2020թ.
31	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ»	10.11.2020թ.
32	«ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	«ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ»	03.02.2021թ.
33	«ԹԻՎ 1 ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 2020» ՍՊԸ	«ԹԻՎ 1»	03.02.2021թ.
34	«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ	«ԷՖ ԹԻՎԻ» «ԷՖ ՔԻԴՍ» «ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ» «ԱՐԱՐԱՏ ՌԱԴԻՈ»	19.02.2021թ.
35	«ԻԳԼ ԱՅ» ՍՊԸ	«ԹԻՎԻ 9 ԷՅ ԷՄ»	12.03.2021թ.
36	«ՆՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»	02.04.2021թ.
37	«ՍՊՈՐՏ ՄԻՔՍ» ՍՊԸ	«ԳՈ.ՍՊՈՐՏ»	27.05.2021թ.
38	«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ	«ՄԵԿ ԷՖԷՄ» «ՄԵԿ ԷՖԷՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ» «ՄԵԿ ԷՖԷՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ» «ՄԵԿ ԷՖԷՄ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ» «ՄԵԿ ԷՖԷՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ»	04.06.2021թ.
39	«ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՀՈՈՒՓ»	11.06.2021թ.
40	«ՋԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՋԱՐԿ ԷՖԷՄ»	11.06.2021թ.
41	«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«ՖԱՍԹՍՊՈՐՏՍ» «ՖԱՍԹՍՊՈՐՏՍ1» «ՖԱՍԹՍՊՈՐՏՍ2»	06.08.2021թ.
42	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	«ՌԱԴԻՈ ՎԱՆ»	04.11.2021թ.
43	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ	«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ»	04.11.2021թ.
44	«ԷԳԱԼԻՏԵ» ՍՊԸ	«ՋԱԶ ԷՖԷՄ»	26.11.2021թ.
45	«ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍՊԸ	«ՌԱԴԱՐ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ»	24.02.2022թ.
46	ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ	«ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ»	13.04.2022թ.
47	«ՍՓՐԻՆԳ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ	«ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ» «ՏՈՒՆ 4Կ» «ԶԲՈՍԱՇՐՋԻԿԻ ԱՉՔԵՐՈՎ» «ԶԲՈՍԱՇՐՋԻԿԻ ԱՉՔԵՐՈՎ 4Կ»	06.05.2022թ.

		«ԱՊՐԻՐ ԱԿՏԻՎ»	
48	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	«ՍԻԹԻ ԷՖԷՄ»	30.05.2022թ.
49	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ	«ՏՈՒՆՏՈՒՆԻԿ» «ՍԻՆԵՄԱՆ»	04.07.2022թ.
50	«ՌԻԲՈԼՈՎՆՈԵ ԹՎ» ՍՊԸ	«ՌԻԲՈԼՈՎՆՈԵ ԹՎ»	21.10.2022թ.
51	«ԼԱՎ ՌԱԴԻՈ» ՍՊԸ	«ԼԱՎ ՌԱԴԻՈ» «ԼԱՎ ՌԱԴԻՈ ՄԻՔՍ» «ԼԱՎ ՌԱԴԻՈ ՀԻԹ» «ԼԱՎ ՌԱԴԻՈ ԴԵՆՍ»	26.01.2023թ.
52	«ՄԵԴԻԱ ՄԱՐՍԵՏ» ՍՊԸ	«ՌԱԴԻՈ ԷՆԵՐՋԻ» «ԷՄ ԷՖԷՄ ՌԱԴԻՈ» «ԷՔՍ ԷՖԷՄ ՌԱԴԻՈ» «ՌԱԴԻՈ ՍՔԱՅ» «ՄԵՏՐՈ ԷՖԷՄ»	26.01.2023թ.
53	«ԼԱՅՔ ԹԻՎԻ ՌԱԴԻՈ» ՍՊԸ	«ԼԱՅՔՆԵՏ ՄՈՎԻՍ» (LIKNET MOVIES)	19.02.2024թ.
54	«ԱԼՖԱ ՄԵԴԻԱ ՀԱՈՒՋ» ՍՊԸ	«ԱԼՖԱ ՆՅՈՒՋ»	14.11.2024թ.

ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

Հ/Հ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ	ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՄԱՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
Ք. ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Կոտայքի մարզ	24.11.2015թ.-24.11.2025թ.
2	«ՍՔԱՅՆԵԹ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Կոտայքի մարզ	14.01.2017թ.-14.01.2027թ.
3	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզեր	03.10.2017թ.-03.10.2027թ.
4	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Շիրակի և Լոռու մարզեր	03.10.2017թ.-03.10.2027թ.
5	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Կոտայքի մարզ	22.12.2017թ.-22.12.2027թ.
6	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզեր	10.04.2018թ.-10.04.2028թ.
7	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզեր	05.05.2018թ.-05.05.2028թ.
8	«ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Գեղարքունիքի մարզ	28.08.2019թ.-28.08.2029թ.
9	«ՅՈՏԱ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Տավուշի մարզեր	08.10.2019թ.-08.10.2029թ.
10	«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի և Վայոց ձորի մարզեր	15.09.2020թ.-15.09.2030թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ			
1	«ԹԻՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	14.07.2020թ.-14.07.2030թ.
2	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	25.09.2020թ.-25.09.2030թ.
3	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.10.2020թ.-24.10.2030թ.
4	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն	29.04.2021թ.-29.04.2031թ.

5	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.09.2021թ.-24.09.2031թ.
6	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	21.10.2021թ.-21.10.2031թ.
7	«ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	24.06.2022թ.-24.06.2032թ.
8	«ՋԻԷՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	30.09.2022թ.-30.09.2032թ.
9	«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	17.10.2022թ.-17.10.2032թ.
10	«ԱՅՆԵԹ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	08.12.2023թ.-08.12.2033թ.
11	«ՆԵՏՔՈՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	05.09.2024թ.-05.09.2034թ.
12	«ՆՅՈՒ ՎԵՅՎ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	26.12.2024թ.-26.12.2034թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	07.07.2015թ.-07.07.2025թ.
2	«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	21.03.2020թ.-21.03.2030թ.
3	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	27.05.2020թ.-27.05.2030թ.
4	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	11.06.2021թ.-11.06.2031թ.
5	«ԱՅ-ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	22.07.2021թ.- 22.07.2031թ.
6	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	16.06.2022թ.-16.06.2032թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզեր	08.10.2019թ.-08.10.2029թ.
2	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Լոռու մարզեր	19.04.2024թ.-19.04.2034թ.
ՄԵԿ ՄԱՐԶ			
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	24.12.2020թ.-24.12.2030թ.
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	09.11.2015թ.-09.11.2025թ.
2	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	23.05.2022թ.-23.05.2032թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՀԱՈՒՋ ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	29.07.2017թ.-29.07.2027թ.
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	04.07.2017թ.-04.07.2027թ.
2	«ՌԵԳԻՈՆՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	23.09.2020թ.-23.09.2030թ.
3	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	29.12.2022թ.-29.12.2032թ.
4	«ՄԻՐԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	05.05.2023թ.-05.05.2033թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	09.11.2015թ.-09.11.2025թ.
2	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	05.04.2016թ.-05.04.2026թ.
3	«ՄԱՑ ՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	20.07.2018թ.-20.07.2028թ.
4	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	12.01.2024թ.-12.01.2034թ.
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	25.07.2017թ.-25.07.2027թ.
2	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	03.08.2017թ.-03.08.2027թ.
3	«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	05.05.2018թ.-05.05.2028թ.
4	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	22.04.2020թ.-22.04.2030թ.
5	«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	10.09.2020թ.-10.09.2030թ.
6	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	26.11.2020թ.-26.11.2030թ.
7	ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ ԱՁ	ՀՀ Կոտայքի մարզ	22.07.2021թ.-22.07.2031թ.
8	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	05.08.2021թ.- 05.08.2031թ.
9	«ՕԼԼՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	26.09.2023թ.- 26.09.2033թ.
10	ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՅՐԻՅԱՆ ԱՁ	ՀՀ Կոտայքի մարզ	08.02.2024թ.- 08.02.2034թ.
11	ԿԱՐԵՆ ԱՐԱՅԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ ԱՁ	ՀՀ Կոտայքի մարզ	11.12.2024թ.- 11.12.2034թ.
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	02.08.2017թ.-02.08.2027թ.
2	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	10.07.2021թ.-10.07.2031թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	24.03.2015թ.-24.03.2025թ.
2	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	21.12.2016թ.-21.12.2026թ.
3	«ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	22.06.2022թ.-22.06.2032թ.
4	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	10.10.2024թ.-10.10.2034թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
1	«ՕՆԼԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Վայոց ձորի մարզ	30.03.2022թ.-30.03.2032թ.

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	30.09.2017թ.-30.09.2027թ.

Հավելված 3
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2024 թվականի հաղորդման

ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՐԳԱՎԻՃԱԿ	ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ / ԿԱՐՃՈՒՄ / ԿԱՍԵՑՈՒՄ
	5 -ական		
1	«ՄԱՅ-ՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
			Տուգանք
			Տուգանք
			Տուգանք
			Տուգանք
		2 -ական	
2	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Կարճում
			Տուգանք
3	«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Կարճում
			Տուգանք
4	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	Հեղինակազորված	Կարճում
			Տուգանք
		1 -ական	
5	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	Լսողական ծրագրեր հեռարձակող	Գրավոր նախազգուշացում
6	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Լիցենզիայի գործողության կասեցում
7	«ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
8	«ՑԱՅԳ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
9	«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ»	Դիստրիբյուտոր	Տուգանք
10	«ԻՄՊՈՒԼՍ»ՍՊԸ	Լսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
11	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
12	«ՄԵԴԻԱ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	Հեղինակազորված	Տուգանք
13	«168 ԺԱՄ» ՍՊԸ	Հեղինակազորված	Տուգանք
14	«ՀԱՈՒԶ ՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Կարճում

15	«ԹԻՎ 1 ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵ ՐՈՒԹՅՈՒՆ 2020» ՍՊԸ	Հեղինակազորված	Տուգանք
16	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
17	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
18	«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Լիցենզիայի գործողության կասեցում
			Լիցենզիայի գործողության դադարեցում
19	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Կարճում
20	«ՄԵԴԻԱ ՄԱՐՍԵՏ» ՍՊԸ	Հեղինակազորված	Կարճում
21	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Կարճում
22	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
23	«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
24	«ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» ԱՁ	Ցանցային օպերատոր	Տուգանք
25	«ՕԼԼՆԵԹ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
26	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Կարճում
27	«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
28	«Ց.Ա.Ա.Ա.Է» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
29	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
30	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	Հեղինակազորված	Տուգանք
31	«ՇԱՆԹ» ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
32	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
33	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Լիցենզիայի գործողության կասեցում
34	«ՄԻՐԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
35	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
36	«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	Տեսալսողական ծրագրեր հեռարձակող	Տուգանք
37	«ՕՆԼԱՅՆ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք
38	«ԱՅ-ՆԵՏ» ՍՊԸ	Ցանցային օպերատոր	Տուգանք

2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

1. Հանձնաժողովի կողմից վարչական տույժի ենթարկելու որոշումների դեմ բերված 6 բողոքով՝ *«ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ-ի հայցով՝* ***2*** *վարչական գործ և* ***1****-ական վարչական գործ՝ «ՎԻ ԷՄ Տելեպրոջեքթ», «ՄԱՅ ՆԵՏ», «168 ժամ», «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերությունների հայցերով.*

• «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ-ի հայցով Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված խախտում. այն է՝ տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովման դեպքերը, «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ-ի կողմից հեռարձակվող «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի «Աբովյան թայմ» ծրագրի ընթացքում հայտնաբերված խախտման փաստով Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 110-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին: Գործը գտնվում է ՀՀ վերաքննիչ դատարանում՝ դատաքննության փուլում:

• «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ-ի հայցով Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում. այն է՝ տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը, «ՏՈՍՊԱ» ռադիոընկերության խմբագրություն ՓԲԸ-ի կողմից հեռարձակվող «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի «Ուրբաթը Տիգրան Քեռոսյանի հետ» ծրագրի ընթացքում հայտնաբերված խախտման փաստով Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 111-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին: Գործը գտնվում է ՀՀ վերաքննիչ դատարանում:

• «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի հայցով Օրենքի 57-րդ հոդվածի 25-րդ մասով սահմանված խախտում. այն է՝ առանց Օրենքի 54-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելը, Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 12-ի թիվ 33-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին: Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում:

• «168 Ժամ» ՍՊԸ-ի հայցով Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին. այն է՝ նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողով չներկայացնելը, Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 26-ի թիվ 38-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում:

• «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ-ի հայցով Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին. այն է՝ վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի

վերաբերյալ ամբողջական ցանկը, տեղեկատվությունը Հանձնաժողով չներկայացնելը, Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 23-ի թիվ 52-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում:

• «ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ-ի հայցով Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ և 31-րդ մասերով սահմանված վարչական տույժ կիրառելու մասին. այն է՝ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը և մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը, Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 7-ի թիվ 56-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում:

2. Հանձնաժողով ներկայացված լրատվամիջոցների ծանուցումը չհաստատելու վերաբերյալ որոշման դեմ բերված 1 բողոք՝ *«ՎԻ ԷՄ Տելեպրոջեքթ» ՍՊ ընկերության կողմից:*

• «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի հայցով Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա և 2024 թվականի մարտի 22-ի թիվ 22-Ա որոշումները վերացնելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում:

Հավելված 5
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2024 թվականի հաղորդման

ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՎԱՐՏՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. Ըստ «ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊ ընկերության հայցի՝ Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ և 31-րդ մասով վարչական տույժ կիրառելու մասին, այն է՝ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը և ցանցային օպերատորի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնակի կատարելը, Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 21-ի թիվ 77-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցը մերժվել է, վերաքննիչ բողոք չի ներկայացվել, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

2. Ըստ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության հայցի՝ «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» Հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ա որոշումը բողոքարկելու և մրցույթի հաղթող ճանաչելու, լիցենզիա տրամադրելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն

պարտավորեցնելու պահանջի մասին: Հայցը և վերաքննիչ բողոքը մերժվել են, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

3. Ըստ «ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության հայցի՝ «Լսողական ծրագրի 99.7 ՄՀՑ հաճախականության օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփոման մրցույթի հաղթող ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 13-ի թիվ 134-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին: Հայցը մերժվել է, բողոքը՝ ևս, վճռաբեկ բողոք չի ներկայացվել, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

4. Ըստ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության հայցի՝ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով և 57-րդ հոդվածի 28-րդ մասով վարչական տույժ կիրառելու մասին Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 86-Ա որոշումը պատասխանողին անստորագիր ներկայացնելու պատճառով իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին: Հայցը և վերաքննիչ բողոքը մերժել են, վճռաբեկ բողոք չի ներկայացվել, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

5. Ըստ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության հայցի՝ «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփոման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 137-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցը մերժվել է, վերաքննիչ բողոքը վերադարձվել է, վճռաբեկ բողոք չի ներկայացվել, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

6. Ըստ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության հայցի՝ «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփոման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 137-Ա որոշումը բողոքարկելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Հայցը մերժվել է, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

7. Ըստ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության հայցի՝ «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփոման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» Հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 143-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին: Հայցը բավարարվել է, Հանձնաժողովի կողմից տարվել է վերաքննիչ բողոք, որը բավարարվել է: Հայցվորի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ ընդունելը մերժել է: Դատական գործն ավարտվել է Հանձնաժողովի օգտին:

8. Ըստ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության հայցի՝ «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփոման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 93-Ա որոշումը բողոքարկելու, մրցույթի հաղթող ճանաչելու, լիցենզիա տրամադրելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու մասին: Գործի վարույթը կարճվել է: Հայցվորի վերաքննիչ բողոքը դատարանը բավարարել է մասնակի. բեկանել է ամբողջությամբ առաջին ատյանի՝ գործի վարույթը կարճելու մասին որոշումը, և փոփոխել այն՝ ամբողջությամբ մերժելով հայցը: Վճռաբեկ բողոք չի ներկայացվել, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

9. Ըստ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության հայցի՝ «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփոման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 103-Ա որոշումը բողոքարկելու, մրցույթի հաղթող ճանաչելու, լիցենզիա տրամադրելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու մասին: Հայցը մերժվել է, վերաքննիչ բողոք չի ներկայացվել, վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

10. Ըստ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության հայցի՝ Օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասի հիմքով վարչական տույժ կիրառելու՝ պետության հայտարարած սգո և հիշատակի օրը գովազդ հեռարձակելը, Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 13-ի թիվ 85-Ա որոշումը պատասխանողին անստորագիր ներկայացնելու պատճառով՝ իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին: Հայցը բավարարվել է: Հանձնաժողովի կողմից տարվել է վերաքննիչ բողոք: Դատարանը Հանձնաժողովի բողոքը մերժել է, վճիռը թողել անփոփոխ: Հանձնաժողովի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանը Հանձնաժողովի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է: Սույն վարչական գործի ընթացքը լուծվել է ոչ Հանձնաժողովի օգտին:

ՀՀ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՕԳՏԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՎՃԻՌՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. «ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ-ի՝ Հանձնաժողովի վարչական տույժ կիրառելու մասին 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 40-Ա որոշումն անվավեր ճանաչելու հայցով: **Վարչական դատարանը հայցը մերժել է:**

2. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» 2022 Հավելված պարտավորեցնելու պահանջի մասին: **Վարչական դատարանը հայցը մերժել է:**

3. «ԱՄԵԴԻԱ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 8-ի թիվ 51-Ա որոշումը և այդ որոշումն անփոփոխ թողնելու՝ 2022 թվականի մայիսի 17-ի թիվ 70-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: **Վարչական դատարանը հայցը մերժել է:**

4. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 103-Ա բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին: **Վարչական դատարանը հայցը մերժել է:**

5. «ՇԱՐԿ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի՝ վարչական տույժ կիրառելու մասին 2022 թվականի մարտի 24-ի թիվ 41-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: **Վարչական դատարանը հայցը մերժել է:**

6. «ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի՝ վարչական տույժ կիրառելու մասին 2023 թվականի հուլիսի 21-ի թիվ 77-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: **Վարչական դատարանը հայցը մերժել է:**

7. «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի՝ «ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին 2023 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 85-Ա որոշումն անվավեր ճանաչելու և վարչական պատասխանատվության ենթարկելուն պարտավորեցնելու պահանջների մասին: **Վարչական դատարանը որոշում է կայացրել վարույթը կարճելու մասին: Նույն գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանն որոշում է կայացրել Հայցվորի վերաքննիչ բողոքը մերժելու մասին:**

8. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի՝ վարչական տույժ կիրառելու մասին 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 86-Ա որոշումը պատասխանողին անստորագիր ներկայացնելու պատճառով իրավահարաբերության

բացակայությունը ճանաչելու պահանջի մասին: **ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:**

9. «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի՝ վարչական տույժ կիրառելու մասին 2022 թվականի օգոստոսի 17-ի թիվ 115-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: **Դատարանը Հայցվորի վերաքննիչ բողոքը մերժել է:**

10. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա տրամադրելու մասին» 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ա որոշման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին: **Դատարանը Հայցվորի վերաքննիչ բողոքը մերժել է:**

11. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊԸ-ի հայցով՝ Հանձնաժողովի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա տրամադրելու մասին» 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 93-Ա որոշման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին: **Դատարանը Հայցվորի վերաքննիչ բողոքը մերժել է:**

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
www.tvradio.am